



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12641

9th

p. 1890

34199

2-15

891.542-3

2-15

№ 27

որն էլ «Տարազ» պատ. հանդեսների

ՅԱԿ. ՂԱԶԱՐՅԱՆՑ

Գ Ի Ի Լ Ե

ՄԻ ԱՐԿԱՇ ԳԻՐԴԵՐԻ ԿԵԱՆԲԻՑ

Թ Ի Փ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐՈՒ» Տ. ՆԱԶԱՐՅԱՆԻ

Կ. ՎՊՆԱ պր. և Յարեհայրէ. փող. սանկհա:

1890

Հրատարակութիւն «Աղբիւր» եւ «Տարազ» պատ. հանդէսների № 27

„Աղբիւր“ ակթ. հեղուցալար

6005

ՅԱԿ. ՂԱԶԱՐՆԱՆՑ

Հիշեալը

891.542-3

2-15

u.u

Գ Ի Ի Լ Ե

1111
9282

Մ Ի ԱՐԿԱՆԾ ԲԻՒՐԴԵՐԻ ԿԵԱՆԲԻՑ



2 0 03

Թ Ի Փ Լ Ի Ս

ՏԳԱՐԱՆ «ԱՐՕՐ» Տ. ՂԱԶԱՐՆԱՆՑԻ
Փարզհասկի եւ Բարեատիանկի փողոցների անկիւնում:

1890

2893

ВАНДАНОВА

Т. Я. Назарьян

ВАНДАНОВА

Дозволено цензурою Тифлисъ, 14-го Юни 1890 г.
Типографія Ароръ Т. Я. Назарьянъ

ՄԵԾԱՊԱՏԻՆ

Դ. ԱՂԱՅԵԱՆՑԻՆ

Խորին արախտագիտութեամբ

Ն. Ի. Ռ. Մ. Ե.

ՀԵՂԻՆԱԿԸ

Գ Ի Ի Լ Է

Մ Ի Ա Ր Կ Ա Ս Թ Ք Ի Ի Ր Գ Ե Ր Ի Կ Ե Ա Ն Ք Ի Ց

Ա.

Լուսինը սև մագէ վրանի դռնից ներս էր արձակել էր աղօտ լոյսը, և միացնելով վրանի ներքին պարզ և մաքուր սարք ու կարգի հետ, մի գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Արդարև այնտեղ ամեն բան պարզ էր և գեղեցիկ: Վրանը հաստատուած էր երեք սիւների վրայ, որոնց ներքին ծայրերը խոր ամրացրած էին գետնին: Վրանի քղանցքները դրսի կողմից գոյնզգոյն պարաններով ամրացրած էին առանձին ցցերի վրայ, որոնց ներսից վրանը շրջապատուած էր ցածր ցանկապատով, որ կազմուած էր բարակ եղէգներից, ուղղահայեաց միացած իրար հետ գոյնզգոյն թելերի ծաղկանկար հիւսուածքներով: Վրանը նոյնպիսի ցանկապատներով ներսից բաժանուած էր մի քանի մասերի. մի տեղ լքուած մատաղ գառնուկներ, նստած չոր խոտով ծածկուած փափուկ գետնին, գլուխները դրած իրար վրայ, մշմշալով հանգիստ քուն էին վայելում: Մի ուրիշ մասում, որ մառանի դեր էր կատարում, շարուած էին մածնով լի կաթսաներ, պանրով լի տաշտեր, կարասներով իւղեր և այլն: Մի ուրիշ մասում՝ ճօճը կապած սիւներից, մանկիկը Նրա մէջ դրած, միևս փոքրիկ երեխաների հետ հանգիստ ենջուած էր ջա-

հէլ քրդուհին, Իսկ վրանի ամենից ընդարձակ մասը, որ աւելի շքեղ էր զարդարւած, պատկանում էր ընտանիքի այն անդամներին, որոնք կամ անչափահաս էին—դեռ չամուսնացած, և կամ ծերեր: Այնտեղ բացի ցանկապատից, պատերը զարդարւած էին գեղեցիկ խալիչաներով և գորգերով, յատակը ծածկւած էր սեւ և սպիտակ թաղիքներով, նախշուն կապերտներով, ներքնարկներով և բարձերով: Սիւներից քարշ էին արած ամեն տեսակ զէնքեր,—երկար կեռ սրեր, մեծ-մեծ պողպատապատ վահաններ, հին ձևի շաշխուհայ հրացաններ, ատրճանակներ և այլն. որոնց մեծ մասը արծաթապատ էին և մաքուր սրբւած և որոնց փայլը լուսնի աղօտ լոյսի հետ աւելի ևս լուսաւորում էր վրանի ներքը: Եւ հէնց սրանք են քրդի համար տան ամենագեղեցիկ զարդերը և նրա ամենասիրելի առարկաները:

Խոր լուռութիւն էր տիրում:

Մի քանի հոգիք, փաթաթւած մի-մի կապերտի մէջ, անկանոն կերպով ձգւած էին վրանի ընդարձակ մասում: Այդ էր քիւրդի ամբողջ անկողինը՝ մի կապերտ՝ առանց բարձի և ներքնակի. սրան չընայած՝ նրանք ունենում են գեղեցիկ անկողիններ, բայց դրանք միայն ընտիր հիւրերի համար են պահւում: Առհասարակ՝ նրանք իրանց շատ հեռու են պահում ամեն տեսակ փափկութիւնից. նրանց համար ձանձրալի է ամեն երեկոյ մէկիկ-մէկիկ շրթեր հանել և առաւօտեան նորից հագնել: Պառկածները ամենքն էլ հանգիստ էին, բացի «մէկից», որ անդադար այս կողքից այն կողքն էր շուռ գալիս, և չէր կարողանում հանգստութիւն գտնել: Գուրքը տիրող խաղաղ լուռութիւնը խանգարւում էր գարնանային մեղմիկ գեփիւռից,

որ իր անոյշ շուկի հետ միախառնելով հեռուից լուրջ հովւի ծանր-մեղմադձոտ դրօն և սրնգի քաղցր ձայնը, մի անոյշ և կախարդական քուն էր բերում մարդու աչքերին, թմբու-թիւն թափում վրան: Բայց բնութեան այս հրաշալիքը զգալի չէր այն «մի հոգուն»։ Նա մի այլ բանով էր յափշտակւած, նրա խելքն ու միտքը թռել էին հեռու, շատ հեռու: Անթիւ մտածմունքներ, անհամար երևակայութիւններ՝ հազար ու մի տեսակ հրէշային պատկերներով ներկայածում էին նրա աչքի առաջ եւ քիչ էր մնում ցնդէին նրան, խելագարէին . . . Նա անհամբեր սրտով սպասում էր «մէկի ն», և նրան, որի հետ կապւած էր իր սիրտը անքակտելի կապերով, սուրբ սիրով, և որին միայն նւիրել էր նա իր սիրտըն ու հոգին:

Մի ցածր շուկ, մի շան հաչոց լսելուն պէս, նա մի կողմն էր ձգում վրայի կապերտը, վեր էր թռչում տեղից և գլուխը վրանի դռան ցանկապատից դուրս հանելով, անթարթ աչքերով, երկար ժամանակ կանգնած, նայում էր դէպի այն կողմը, որտեղից պիտի գար իր «սրտի առարկան», և երբ ոչ ոք չէր երևում, յուսահատ հեռանում էր ցանկապատից, մտնում անկողինը և կրկին խորասուզւում մտածմունքներին մէջ:

— Ի՞նչ եղան, Ասուած... մի գուցէ մի փորձանքի հանդիպեցին . . . Ինչո՞ւ այսքան ուշացան . . . մտածում էր նա:— Տէ՛ր, Դու փրկիւր, Դու ազատիւր ամեն փորձանքից,—կրկնում էր նա շուտ-շուտ աչքերը բաց ու խուփ անելով:

Գիշերից բաւականին անցել էր: Քնել էր նա թէ՛ ոչ, այդ ինքն էլ չըզիտէր, միայն այն իմացաւ, որ մի ձիաւոր շրթիւր-փալով ցած իջաւ վրանի դռան առաջ: Իսկոյն աչքերը ձով-

ուելով վեր թռաւ տեղից, վերջրեց գլխաւիերեւը՝ վրանի ձողից քարչ արած ատրճանակը, չախմասը քաշեց և ձայն տուեց.

—Ո՞վ ես:

—Ես եմ...—պատասխանեց եկեղըը վրդովւած ձայնով և ձիւ սանձը կապելով վրանի դռան, ինքը համարձակ ներս մտաւ:—Գիւլէ, տղէրքից մէկնումէկին զարթեցրու, թող վեկենան քիչ ման ածեն ձին, մինչև քրտինքը հովանայ:

—Աւղակ, դու էս . . . Ո՞ւր են միւս տղէրքը, ինչո՞ւ այսքան ուշացաք, ո՞ւր են հայրիկը, Մըստօն, Մամադ-բէգը և միւսները: Ասան, ի՞նչ կայ . . . ի՞նչ համբաւ ունիս բերած: Գէ, շուտ ասա, յետոյ տղէրքին կըզարթեցնեմ:

—Սո՛ւս կաց... Գիւլէ,—ասաց եկեղըը յուզւած, չորս հոգի «կորցրենք» . . .

—Վայ Աստուած . . . Միթէ հայրիկը, Մստօն, Մամադ . . . գոչեց Գիւլէն սարսափահար, առանց կարողանալու վերջինն անունը լրիւ արտասանել:

—Հայրիկը չէ. Մըստօն, Մամադ-բէգը, Ռասօն և Աւղին:

—Մամադ-բէգը . . . կրկնեց Գիւլէն առանց հաւատալու իր լսողութեանը:—Մամադ-բէգը . . . արտասանեց նա մի անգամ ևս, և էլ չըկարողացաւ ոտքի վրայ կանգնել: Անսպասելի լուրը սուր նետի պէս ծակեց նրա սիրտը. նրա աչքերը սևացան, ոտքերը դողդողացին, ատրճանակը ձեռքից վայր ընկաւ, և ինքն էլ տեղն ու տեղը ընկաւ ցանկապատի առաջը:

Առանց այն էլ յուզւած բոթաբերը տեսնելով այս, էլ չըկարողացաւ համբերել, քրդական բոլոր կոշտութեամբ բռնեց նրա թևից և գոռաց.

—Աղջի Գիւլէ, վեր կաց, նազ անելու ժամանակ չէ:

Ուշագնացը աչքերը բաց արաւ. մի քանի ըռպէ ապուշ կտրած՝ մնաց անխօս, առանց մտաբերելու, թէ ինչ պատահեց իրան: Վերջապէս մտաբերեց նա իր լսածները, մի և նոյն ժամանակ լեշեց, որ ինքը աշիւր (ազնւատոհմ, քաջութեամբ անանի) ընտանիքի գաւակ է, ուրեմն չըպէտք է այնքան թուլասիրտ վնէկ: Բայց վէրքը այնքան խորն էր մտել նրա սրտի մէջ, որ նա դարձեալ չըկարողացաւ զսպել իրան. յորդառատ արտասուքի կաթիլները անընդհատ հոսում էին նրա խոշոր և սև աչքերից:

—Գնա, Գիւլէ, գնա ձածօլին զարթեցրու, թող վեր կենայ «դաՓե-նաւարի» խբէ, ցեղի բոլոր տղէրքը հաւաքելն, գնանք գոնէ դիակներն էլ սզատենք թշնամու ձեռքից: Հայրիկն էլ թևից վէրք ստացաւ. Հասօն նրան տարաւ Գիւղին, քիւրա Աւօեց տուն:

Մի քանի ըռպէից յետոյ «դաՓե-հաւարու»—այդ չարագուշակ թմբուկի ձայնը՝ ամբողջ ցեղի տղամարդկանց իր կողմը հրաւիրեց. ամենքն էլ իմացան այդ բոթը, և վերադառնալով իրանց վրանները, սխեցին պատրաստել, սպառազլնել՝ վաղ առաւօտեան թշնամիների վրայ դիմելու համար . . .



Բ.

Մի քանի տարիներ առաջ, Ջալալցի կոչած ցեղի մի մասը, արօտատեղիների սղուծեան պատճառով, բաժանուել էր միև մասից և Հասան-աղայի առաջնորդութեամբ եկել ու իր բնակութիւնը հաստատել էր Ծաղկանց լեռան լանջերում, վաճառելով այնտեղից Սիւկըցի կոչած ցեղին: Ջալալցիք թէպէտ յայտնի էին իրանց քաջութեամբ և աւելի մեծ ցեղ էին կազմում Բագրևանդայ քերդերի մէջ, բայց Սիւկըցիք ևս պակաս չէին: Սրանք գուցէ յաղթէին նորեկ Ջալալցոց այդ մասնին, բայց վախենալով միև մասի վրէժխնդրութիւնից, Ծաղկանց լեռանը յանձնել էին նրանց և իրանք քաշուել էին Մասիսի ըստորոտները: Այս քիչ վերաւորանք չէր Սիւկըցոց համար, և իբրև քրկոյ, շուտով չէին կարող մոռանալ: Նրանք անհամբեր սպասում էին յարմար առթի, որ կարողանան իրանց վրէժը լուծել: Իսկ Ջալալցիք տեսնելով որ նրանք ոչ մի դիմադրութիւն չեն ցոյց տալիս, կարծեցին թէ իրանցից վախենում են, և ուզեցին օգտուել դրանից: Նրանք ամեն անգամ յարձակում էին Սիւկըցոց հօտերի, իլիսիները վրայ, և յախտակում էին ընտիր ձիաներ և ոչխարներ:

Մօտ օրերս էլ նրանք վախցրել էին չորս նորահաս նրժոյգներ Սիւկըցի Ջաւհար-աղայի իլիսից: Ջաւհար-աղան այլ ևս չըկարողանալով համբերել նրանց յանդգնութեանը՝ ին-

քըն անձամբ վերցրել էր իր երկու որդուն, չորս հօգի էլ ցեղի մէջ յայտնի երիտասարդները և զնացել էր, որ ինքն էլ փոխարէնը նրանցից մի բան յախտակէ, գողանայ: Սրանց յաջողում է Հասան-աղայի հօտից հարիւրի չափ ոչխարներ խլել, և առաջներն արած, քշել դէպի իրանց կողմը: Բայց, դժբախտաբար ճանապարհի կիսին հանդիպում են Ջալալցի Հասան աղայի աւազակային խմբին, որոնք իմանալով սրանց Սիւկըցի լինելը, սկսում են կռիւ բանալ, որ կարողանան ոչխարները սրանց ձեռքից խլել:—առանց գիտենալու, որ իրանցն է: Սկսւում է հրացանաձուլութիւնը: Ջալալցիք թուով աւելի շատ են լինում, որ և կարճ ընդհարումից յետոյ, կարողանում են Սիւկըցիներից չորս հօգի գնտակահար անել և Ջաւհար-աղային էլ թուկից վէրք տալ ու յետ խլել ոչխարները: Ընկածներից մէկը Ջաւհար-աղայի փոքր տղան է լինում, և մէկը փեսան՝ Մամադ-բէգը, որ Սիւկըցի երիտասարդների մէջ առաջինն էր իր քաջութեամբ, և որին միայն կարողացել էր ընտրել իրան փեսացու Ջաւհար-աղայի աղջիկը, գեղեցիկ Գիւլէն:

Սրանք դեռ նոր էին նշանադրւած և այդ գիշեր անհամբեր „սպասողը“ Գիւլէն էր, որ սպասում էր տեսնել իր նշանածին մեծ աւարով յետ գալիս: Բայց նրա յոյսերն ունայն անցան և դրա փոխանակ նա լսեց իր սիրելու մահաւան գոչժը . . . Նա սպասում էր, որ միև օրը առիթ կունենայ պարծենալու ընկերուհիների մօտ իր նշանածի այդ օրւայ արած քաջագործութիւններով: Նա սպասում էր, որ ահա կըգայ Մամադ-բէգը իր եղբայրների և հօր հետ, մեծ աւարով, բայց մի թեթև վէրք ստացած, որի սպին յաւիտենական նշան կըլինի նրա քաջագործութեան և ինքն արդէն հին թաղիքի կտորներ էր գը-

տել, պատրաստել, որ վերաւորը գալուն ալէս՝ այրէր և դնէր վէրքի վրայ: Բայց նրա սպասածի հակառակը եղաւ: Դա մի մեծ վիշտ էր նրա համար և շատ մեծ . . .

Գ.

Թէ քաջութեամբ, թէ գեղեցիութեամբ և թէ աշխատասիրութեամբ Գիւլէն յայտնի էր ամբողջ ցեղի աղջիկներին մէջ: Ոչ մի աղջիկ չէր կարող նրա հետ մրցել թէ ձիավարութեան և թէ զինաշարժութեան մէջ: Գեռ փոքր հասակում, նա իր հասակակից սղայոց հետ համարձակ ասալարէզ էր դուրս գալիս ջրիկ խաղալու, միահակներով ու վահանով մենամարտելու. և շատ անգամ էլ յաղթող էր հանդիսանում: Մանկական տարիներն անցնելուց յետոյ, նա թողից սղայոց խումբը և մտաւ աղջիկներին խմբի մէջ. այնուհետև սիւսեց նրանց հետ մրցել ընտանեկան դորժերով, բայց այստեղ ևս նրան յաղթող չեղաւ, յաղթանակը միշտ իրան մնաց:

Գիւրդերի մէջ մի սովորութիւն կայ, ամեն գարուն օտարը զօզան (եայլա) դուրս գալուց մի ամիս յետոյ, մի օր բոլոր ցեղի աղջիկները կըհաւաքուին և կըգնան մօտիկ բլրակներէից մէկի վրայ, խնջոյք կըկազմեն և իրար հետ մրցութիւններ կանեն: Նրանք այդ ժամանակ ոչ մի տղայ մօտ չեն թողնել իրանց, բացի մէկից, որ պարիլապարտուկ կածի իրանց հաճար, որ խաղան: Այդ հանդէսը կոչուում է «բընդարօկ»:

«Բնդարօկն» սխոււմ է նախ պարով. պարկապուկ փչողը փչում է, իսկ աղջիկները ճկովթներն իրար ճկովթի կցելով, մի կօլօրակ շրջան են կազմում նրա շուրջը և գեօլընդ խաղում: Յետոյ սխոււմ են զանազան մրցութիւններ անել: Նրանք բաժանոււմ են մի քանի առանձին խմբերի, և իւրաքանչիւր խմբից մէկ-մէկ հոգի հերթով սխոււմ են երգել, այնքան՝ մինչև մի խումբը գեղեցիկ երգերով կըյաղթէ միւսին. յաղթանակ տանողի օգուտն այն կըլինի, որ մինչև միւս տարւայ «բնդարօկի» ժամանակ, նրա անունը կըլիշէ: Յետոյ սխոււմ են բոլորը միասին թէ շէ մանելով իրար հետ մրցել: Բուրդը երկար կօլօրեցրած փաթաթում են աջ թւեներին, մի կտոր քառանկիւնի կաշի, որ կոչոււմ է յարալանի կապում են իրանց ձախ կողքին, որ թէչին քսելիս շորերի փէշերքը չը մաշեն, և սխոււմ են դիւցաղներգութիւններ երգելով մօսնել մինչև թւի ամբողջ փաթեթը վերջանայ: Ինչ գեղեցիկ տեսարան է, երբ 20—30 դեռահաս և քաջաոտղջ աղջիկներ մի կարգի շարոււմ են ուրախ ու զւարթ, քաղցր շէշն կամ դրօն գլում, և որոնց ձայնի հետ միախառնելով իւրաքանչիւրի թուին եղած պողովատէ յարալաների (սպարանջան) զնգզնգոցը, մի տեսակ գեղեցիկ ներդաշնակութիւն է կազմում: Շուտ մանող վերջացնող աղջիկը տանում է յաղթանակը և ամենքի բերանից ուրախ ու բարձրաձայն գովաբանութիւններ է լսում: — Այսպիսի մրցութիւնները մէջ յաղթանակ տանողը միշտ Գիւլէն էր լինում: Աղջիկները տեսնելով, որ նրա հետ մրցել չեն կարողանում, խնդրեցին նրան, որ հրաժարել մրցութիւնից և ամեն անգամ միայն «բնդարօկի» կարգապահը և իւրաքանչիւրին զնահաստողը լինի: Նա համաձայնեց:

Բացի սրանից, Գիւլէի պէս գորգ և կապերու գործող շը-
կար ողջ ցեղի թէ հարսները և թէ աղջիկները մէջ. նրա գոր-
ծած գորգերը փաշաներին անգամ ընծայ էին տարւում: Այդ
էր պատճառը, որ շատ ցեղապետների որդիք խնդրում էին նրա
ձեռքը, շատ բէգեր մեծամեծ ընծաներով դիմում էին Ջաւ-
հար-աղային և Գիւլէին իրանց որդոցն ուզում: Բայց Գիւլէն,
հաստատամիտ Գիւլէն՝ ոչ ոքի ձեռքը չէր ընդունում: Քիւրդ
աղջիկը չի նայում իր փեսացւի հարստութեանը. նիւթականը
նրա աչքում ամենափոքր նշանակութիւն անգամ չունի. նրան
չլացնում է միայն երիտասարդի բնական հարստութիւնը—ք ա-
ջ ու թիւն, ճ ա ռ պ ե կ ու թիւն և ա ն վ ե հ ե ռ ու թիւն:
Գիւլէի աչքը միայն Մամադ-բէգի վրայ էր. Մամադ-բէգի, որ
ոչ բէգ էր և ոչ մի ցեղապետի որդի, այլ միջակ կարողութեան
տէր մի կտրեճ և քաջութեամբ անւանի երիտասարդ:

Ինչպէս Գիւլէն յայտնի էր իրանց ցեղի աղջիկները մէջ,
այնպէս էլ Մամադ-բէգը յայտնի էր երիտասարդ տղաների մէջ:
Նա բարձրահասակ, թխտղէմ, բարակ և երկայն բեխերով ու
թուխ աչք-ուներով մի նորահաս երիտասարդ էր: Նրբ հա սպե-
տակ կամ կապտագոյն քօրօզը թեք ծածկում էր գլխին,
տասը-տասներկու հատ գոյնզգոյն եագմէք ուրբում, փաթա-
թում շուրջը, կարճ կապուտ չուսէն հագնում, գէնքերը կա-
պում, ձին հեծնում, ընկնում էր երիտասարդների առաջը, ցեղի
բոլոր աղջիկները աչքերը միայն նրան էին նայում. այդ ժա-
մանակ նրան տեսնողը կարծում էր թէ մի վէզիլի կամ մի փաշայի
որդի է: Թէ կոււի և թէ աւազակութեան մէջ նա արդէն յայտնի
էր: Բաւական էր, որ մի յանձնարարութիւն առաջարկէին ե-
րիտասարդներից մէկին, օրինակ՝ կարաւան կողպտել, ձի գո-

ղանալ եւ այլն, որ պիտի կատարէր Մամադ-բէգի հետ միա-
սին, երիտասարդներից իւրաքանչիւրը կուգէր ինքը կատարել
այդ յանձնարարութիւնը, կանխապէս հաւատացած լինելով, որ
Մամադ-բէգի հետ տեղ գնացողը, դատարկաձեռն չետ չի դառ-
նալ: Քիւրդինն էլ այդ է, որ երիտասարդը քաջ լինի, ճարակի
լինի, աւազակութեան մէջ փորձած լինի. նրա անունը կը-
բարձրանայ, ամենքը նրա գլխով ու արևով կը երդւեն: Մա-
մադ-բէգը այս բոլոր յատկութիւններն էլ ունէր, և սրանք էին,
որ յափշտակել էին Գիւլէի սիրտն ու հոգին: Դեռ նշանադրու-
թիւնից երկու տարի առաջ՝ նրա աչքը Մամադ-բէգի վրայ էր,
սկսած այն օրից, երբ՝ մի անգամ նա Ջաւհար-աղայի հետ
Պարսկաստանի կարաւանը կողպտելիս՝ թուից վէրք էր ստացել,
և վերաբոյժը նրա թուը տւած Գիւլէի ձեռքը, ինքը սպեղանիով
փաթաթում էր: Այդ օրից Գիւլէի սիրտը կապեց նրա հետ և
վճռեց՝ բացի Մամադ-բէգից ոչ ոքի չընտրել իրան փեսացու:

Մամադ-բէգն էլ կարծես հասկացել էր նրա սրտի գաղտ-
նիքը, ինքն էլ սկսել էր մի ուրիշ տեսակ նայել նրա վրայ:
Առաջ իրար պատահելիս՝ բարևում էին, խօսում, ծիծաղում
իրար հետ, բայց այն օրից յետոյ, իրար տեսնելիս մի խոր
հայեացք էին ձգում միմեանց երեսի, ժպտում և ապա աչքերը
գետնին ձգելով հեռանում. կարծես նրանցից իւրաքանչիւրը
աշխատում էր իր սրտի գաղտնիքը թաքցնել միւսից . . .

Մամադ-բէգը հասակն առած եղբայր չունէր, այդ պատճառով իրանց տան հովիւը ինքն էր. երեք հարիւրնց բաղկացած ոչխարներն հօտը ինքը պէտք է ամեն օր արածեցնէր. և նա ամենևին չէր դժգոհում իր այդ պաշտօնին: Առաւօտները կարմիր թաղիքէ կոռչարը ձգած ուսերին, երկար շնչատէ սրնգն առնում էր ձեռքը և քաղցր սուլելով, ծանր քայլերով դնում էր մօտակայ բլուրը, յետևեց տանելով ողջ հօտը: Նստում էր բլրի կատարին, որտեղեց դէմ առ դէմ երեւում էր Գիւլէնց վրանը, և աչքերը յառած դէպի այն կողմը, դիտում էր նրա ամեն մի շարժումը և սրնգի քաղցր ելևէջներով նրա ուշադրութիւնը դէպիւրան էր հրաւիրում: Գիւլէն հասկանում էր այդ, սրնգի ձայնի ելևէջներն հետ, բարձրանում-ցածրանում էր նրա անմեղ սիրով և սիրտը . . . Բայց ձեռքերը դարձեալ չէին դադարում աշխատելուց:

Գեռ կէսօր չեղած, ոչխարները պէտք է յիշ բերէին, կլծէին: Վրաններնց քիչ հեռու, ամենքն իրանց համար նշանակեալ բէրատեղ ունէին, ուր՝ օրական երեք անգամ ոչխարները բերում էին կլծելու: Այս տարին Մամադ-բէգը՝ գիտութեամբ՝ իրանց համար բէրատեղ ընտրել էր Գիւլէնց բէրատեղն կողքին: Ամեն անգամ, երբ նրա քոյրերն սկսում էին ոչխարները կլծել, ինքը կանգնում էր մի կողմ և աչքերը ձգում դէպի Գիւլէն, որ թւերը մինչև արմունկները քրտած, պղնձէ մեծ բաղիւն առաջը դրած, գլուխը դէմ տւած ոչխարի դմակին, Փըշքըշացներով կլծում էր և բաղիւն դատարկում մեծ կաթսայի մէջ: Նայում էր Մամադ-բէգը, և չէր կշտանում նրա վրայ նայելուց. ինքն իրան զւարճանում էր, զմայլում. նա այդ միջոցին մի տեսակ երանութեան մէջ էր կարծում


լրան և չէր ուզում որ մէկը խանգարի իր այդ զմայլմունքը:

Անցնում էին օրեր. և որքան անցնում էին, այնքան աւելի և աւելի էին բորբոքում նրանց սիրոյ կայծերը. նրանցից իւրաքանչիւրը ուզում էր վերջապէս իր սրտի գաղտնիքը յայտնել, իր սիրտը բանալ միւսի առջև. բայց սմթթը, պատկառանքը չէր թոյլ տալիս այդ առաջին քայլն անելու. հարկաւոր էր մի ուրիշ անձնաւորութիւն, որ այդ երկուսին մօտեցնէր իրար, բանար նրանց փական բերանը և առիթ տար գաղտնիքը բանալուն: Այդ միջնորդը եղաւ Մամադ-բէգի քոյր Գօզալը: Նա վաղուց նկատել էր, որ այդ երկու միամիտ արարածներն սրտերը գաղտնապէս կառւած են իրար հետ, բայց չեն յամարձակում մէկը միւսին յայտնել: Մի անգամ նա առանց Մամադ-բէգի գիտութեան ասաց Գիւլէնին.

1001
1002
1003

- Աղջի Գիւլէ, գիտե՛ս ինչ եմ բերել քեզ համար.
- Ի՞նչ, Գօզալ.— հարցրեց միամիտ աղջիկը.
- Մի կարմիր խնձոր . . . Մամադ-բէգը բարևում է քեզ: Գիւլէն ամօթից կարմրեց և երկար ժամանակ չէր իմանում ինչ պատասխանի. վերջապէս նա սիրտ արեց և հազիւ հազ կարողացաւ կոխողից դուրս թողնել.
- Բարին եղբօրդ արեւին . . .

Սրանով ամեն բան պարզեցաւ Գօզալի համար: Երբ քեւրդ աղջիկը բարև է ստանում մի օտար երկտասարեց և պատասխանում է բարևը ուղարկողի անունով, նշանակում է համաձայն է նրա՝ առանց ասելու՝ առաջարկութեան . . . Խորամանկ քրդուհին— Գօզալը, նոյն բարևը փոխադարձաբար տարաւ իր եղբօրը— Մամադ-բէգին: Նա ևս նոյն ձևով ընդունեց: Այնուհետև նրանք այլևս իրար հետ չխօսկան չըմնացին.



Գօգալը երկուսին իրար մօտ բերելով, ստիպեց որ խօսեն: Երկար չքբաշեց, այս բանն իմացաւ Ջաւհար-աղան, և որովհետեւ իր աչքն էլ արդէն Մամադ-բէգի վրայ էր, ուստի կանչեց նրա հօրը և իր աղջիկը նշանադրեց նրա որդու վրայ, խոստանալով ոչինչ չառնել նրանից, ինչպէս սովորութիւն էր, որ արդայն տէրը մեծամեծ ընծաներ պիտի տար աղջկայ տիրոջը:

Նշանադրութիւնից յետոյ՝ նրանք իրաւունք ունէին իրար հետ աւելի ազատ ասել-խօսել: Եթէ աղջիկն ու տղէն իրար լաւ չեն ճանաչում, կարող են միմեանց առաջարկութիւններ անել, խօստումներ տալ: Գիւլէն լաւ էր ճանաչում Մամադ-բէգին, այդ պատճառով հրաժարեց մի որ և է առաջարկութիւն անելուց. բայց Մամադ-բէգը մի անգամ ասաց նրան.

— Գիւլէ ջան, մի բան պիտի ասեմ, չընեղանաս. դու ինձ ես լաւ ճանաչում ես՝ քեզ, դու իմ բնաւորութիւնը լաւ գիտես, ես՝ քո, եթէ դու ինձ հաւանում ես, եթէ դու ինձ սրտովք ես սիրել, արի հիմիկանից ինձ խօսք առը, որ մինչև ի մահ ինձանից անբաժան և հաւատարիմ ամուսին պիտի լինես, իսկ եթէ ոչ, իմ բնաւորութեան մէջ դժոնում ես մի այնպէս պիտի կէտ, մի այնպիսի վատ յատկութիւն, որից կտակաւորում ես, այդ էլ հիմիկանից պարզապէս ասա, և դու քեզ համար, ես ինձ համար, իրարից բաժանելիք, քանի ուշ չէ, որ մի գուցէ ապագայում, ամուսնութիւնից յետոյ, ստիպւած լինես ինձ հետ քիչիւնդ կտրել (ապահարզան տալ) . . . Ես այն աստի մարդկանցից չեմ, որ՝ ամուսնանամ, երկու-երեք տարի մի կին պահեմ, յետոյ թօյլ տամ որ նա դնայ ուրիշ մարդ առնել, ես էլ դնամ՝ ուրիշ կին առնեմ: Գիւլէ ջան, թէպէտ միանգամից անյարմար էր իմ այս ասելիքս, բայց ես գիտեմ, որ

նշանադրած զոյգի իրար հետ խօսեցած իւրաքանչիւր բառը անջնջելի կերպով տպաւորում է նրանց սրտի մէջ . . . Ես ուրիշ երկուսսարգէներն պէս չեմ կարող առանց սկիզբն ու վերջը մտածելու, նշանածիս հետ լիմար խօսակցութիւններով զարձանալ, — սարծենալ, գովել քեզ, շողփորթել . . . Ձէ, Գիւլէ, ես այնպէս չեմ անիլ. եթէ իմ մտքում մի բան լինի, ես պարզապէս կտեսմ, չեմ ծածկիլ: Այս էլ աւելացնեմ, որ ես բոլոր սրտովս սիրում եմ քեզ, սիրում եմ անկեղծ և անասման և ուխտում եմ քո առաջ, միշտ այսպէս մնալ: Այս բոլորը ես հիմիկանից ասացի, որ ապագայում սուր ու վահան չընաղան իմ տանս մէջ . . .

— Դու արդ խօսքն ասացիր, Մամադ, — ասաց Գիւլէն կեսակշտացած, — թող մի երկու խօսք էլ ես ասեմ. դու գիտես, որ այս երկու տարի է իմ աչքս քեզ վրայ է. շատ երկուսսարգէներ եմ օտեսել, շատ երկուսսարգէներ են ինձ ուզել, բայց բոլորին էլ մերժել եմ: Միայն քեզ հաւանեցի, Մամադ, միայն քեզ սիրեցի հոգով ու սրտով և իմ անձս նւիրում եմ միայն քեզ. խոստանում եմ մինչև մահ քեզնից անբաժան և հաւատարիմ ամուսին լինել: Այժմ գէ դու էլ արի ինձ խոստացիր, որ մինչև վերջ պիտի ինձ սիրես, բացի ինձանից ուրիշ վրայ աչք չըպիտի ունենաս, և „նեհի“ (էլի մի երկրորդ կին) չըպէտք է բերես. դու որ ինձանից խոստումներ ասաս, ուրեմն դու էլ խոստացիր և երդւիր:

— Երդւում եմ Աստուծոյ անունով, որ հէլ է չըպէտք է ներս մտնէ իմ տան շէմքից, — պատասխանեց Մամադ-բէգը:

— Ահա իբրև նշան իմ խոստմանս — աւելացրեց Գիւլէն — տալիս եմ քեզ այս *Ռամայիզը*, որ չորս լիտր բուրդ եմ տւել

և մի դէպքերն զհենր: Այս ասելով, նա իր երկայն անթարու գրպանից հանեց մի քառանկիւնի կանաչ ու կարմիր կաշի, որի մէջ կարած էր համայնը և տուաւ Մամադ-բէգին: — Դէպքն ասաց, որ՝ այդ համայնի մէջ այնպիսի թալիսմաներ կան գրած, որ ինչ մարդի մօտ գտնուի, նա չար նի ա թի չի հանդիպի, ոչ սուր ու թուր կրքանի նրա վրայ, և ինչ գործի ձեռնամուխ լինի, յաջողութեամբ կը վերջացնի: Սրանից աւելի մի մեծ ընծայ չեմ գտնում քեզ տալու, Մամադ, պահիր այդ մօտը և միշտ չիշիր խոստումս ու հաւատացած եղիր, որ սրբութեամբ կը կատարեմ . . .

— Դիւլէ, դու այս տալիս ես ինչ իբրև նշան քո խոստմանդ, ես ինչ տամ քեզ: Ահա մի յոգեմ* որ երկու օր չըկայ գնել եմ մի հայ սպիւրջից. դէր զթիւ և հաւատացած եղիր, որ ես ևս իմ խոստումս կը կատարեմ: Նա ցած առաւ գլխի քօլօզը, և նրա շուրջը փաթաթած ետգմէքի միջից հունեց խզէ մը ու տուաւ Դիւլէին: Դիւլէն ուրախ-ուրախ առաւ և անմիջապէս անցկացրեց քիթը:

— Դէ տես, Մամադ ջան, սնոգ է դալիս:

— Ինչ ասել կուզի . . . այդ աչքերը, ունքերը, մաղերը որ դու ունիս՝ քեզ ի՞նչը չի սագ գալ . . . ասաց հոգեգմարութեամբ Մամադ-բէգը և սիրուհու ձեռքերն առնելով իր ձեռքի մէջ, միւս ձեռքով սկսեց շոյել նրա թխահեր դուլսը, որի կարծ

* Խզէ մը աստղածու արծաթէ կամ ոսկէ մի փոքրիկ զարդ է, որ քրդուհիք անց են կացնում (ականջի օղի պէս) իրանց քիթի մի կողքից (սովորաբար աջ) եղած ծակի մէջ, որ ինչպէս ականջները, ծակում են դեռ մանուկ հասակում:

գանգուրները ծածկել էին պարզ ճակատը և հասել մինչև գրակիչ ունքերը:

Դիւլէն ևս նոյն հոգեգմայլ դրութեան մէջ էր . . . Նա նազելի գլուխը դրած օրերու կը ծփնէ, արդէն իր բոլոր բաղձանքներին հասած և բախտաւոր էր համարում իրան . . .

Ո՛րքան քաղցր էր այդ ըբէն, որքան ախորժելի . . .

Լուսթիւն էր տիրում նրանց մէջ. լեզուն այլևս անկարող էր բառեր արտասանել . . . խօսալու հերթը անցել էր նրանց հոգեկան աշխարհին: Նրանց սրտերը գաղտնապէս խօսում էին իրար հետ այն ամենը, ինչ որ՝ գուցէ լեզուն չըկարողանար արտայայտել . . .

Շիր-կանիսի* էր այդ վայրը՝ ուր նրանք հանգչում էին, այն բլրի ստորոտը, ուր սովորաբար Մամադ-բէգը արածացնում էր իր հօտը:

Իբրև հարազատ մօր ջուխտակ ստինքներից բղխած մեղրածօր կաթ, մի քարի տակից դուրս էին բղխում «Շիր-կանի» մի գույզ աղբիւրները և հէնց այնտեղ էլէթ խառնելով իրար հետ, կազմում էին մի փոքրիկ լճակ, և ապա այնտեղից դուրս էին թողնում մի քաջան սոււակ, որ անուշաբույր ծաղիկների

* Այս ր-կ անի քիւրդերէն նշանակում է կաթնաղբիւր: Այդպէս էր կոչվում, որովհետեւ աղբիւրի գուրս բղխած տեղը ծածկած էր սպիտակ խիճերով եւ ջուրն էլ նրանց պոյնս ընդունելով՝ կաթնագոյն էր երեւում:

միջոց քաղցր կարկաչունով հոտում էր դէպի ցած և առատ սնունդ մատակարարում էր շրջակայ հարուստ բուսականութեանը: Չէր երևում աղբիւրը, չէր երևում և առևակը, միայն լուռն էր նրա անուշ խոխոջիւնը: Բազմեբանդ ծաղիկները սերով շրջապատել էին նրան և կարծես չէին ուզում, որ ուրիշ որ տեսնի նրան, վայելի նրա անմահական համը: Կարծես ամեն ինչ այնտեղ սերահար էր, և աղբիւրը, և առևակը, և ծաղիկները, և այդտեղ եկողը, այն, այդ վայրն ստեղծւած էր միայն սեր: Հարսերի համար, ուրիշ օտար թէ հասնէր այդտեղ: Շիր-կանին իբրև սերահարների մայր, բազմել էր փոքրիկ հարթավայրի կենտրոնում, և լուռ էր իր մօտ եկող սերահարներին խօսակցութիւնը, նա սիրտի ճշմարիտ վկայ լինէր նրանց կուսական անմեղ սրտից բղխած անկեղծ խօսակցութեանն ու խոստմունքներին, և ապագայում սիրտի լիչեցնէր ամեն մէկին իր խոստմունքը և պարտաւորութիւնները:

„Շիր-կանին“ շատ սիրահարներ էր ձանապարհ ձգել, շատերին էր հասցրել իրանց նպատակին—մուրազին . . .

Գուցէ շատ երկար տեէր այս վերջին սերահարներին հոգեզմայլութիւնը, եթէ չըլտէր բոլոր հովիւներին միաձայն „ըհ-ըհիկը“. սրնգի այդ եղանակով նրանք հրաւիրում էին իրանց հօտերին դէպի բէր: Արևն արդէն խոնարհել էր դէպի իր գիշերային հանգստարանը. նրա միայն վերջին ճառագայթներն էին պազում և կարծես „մնաս բարով“ էին ասում արևարհին:

Կարծիր թաղիքէ կ ու լ ա բ ր ց ա ծ էր բնիկ Մամազբէգի թևերից, ք ո լ օ զ ր թ ք ք ե լ էր մի կողմը և նա գլուխը խոնարհել էր Գլուխի երեսին, որը գլուխը դրել էր նրա ծնկանը և

հանգիստ առել: Գլուխութեամբ թէ անգլուխութեամբ Մամազբէգի շրթունքները հասել էին նրա այտերին:

Հովիւներն սրնգի ձայնն արթնացրեց նրանց. Մամազբէգը լեռ քաշեց շրթունքները և Գլուխն գլուխը վերցնելով նրա ծնկից, հեզնական ժպտոր երեսին, մի թեթև ապտակ հասցրեց նրան, ասելով.

— Ինչպէ՞ս համար ձակեցիր համբուրել.

— Ի՞նչը պակասեց, Գլուխ.

— Ոչինչ, բայց ինչո՞ւ . . .

— Ի՞նչ լաւ, Գլուխ, նազ մի անիլ . . . մեր աղջիկներն բընաւորութիւնն այդպէս է, երբ տեսնում են արդէն իրանց չափազանց սիրում է՝ սիրում են նազ անել, խկ երբ արդէն իրան ծանր է պահում, նոր իրանք են սիրում փաթիլ նրա վզովը, աշխատում են իրանց սիրել տալ: Սթէ կուգես՝ ես էլ ինձ այսուհետև „ծանր կըծախեմ“ . . .

— Ինչ ուզում ես՝ ասա, Մամազ, հօ մի լաւ ապտակ կերուր . . .

— Իեր մէկ անգամ էլ համբուրեմ՝ այժմ երկու ապտակ սուր . . .

— Ի՞նչ բաւական է, Մամազ, բէր կը փչեցնին, ես իբր թէ եկել եմ հօրս համար սառը ջուր տանելու, նա զնացել է Բայագէդէ, փաշն համար „փէշքէշներ“ է տարել, այսօր պէտք է վերադառնայ: Բէրից ուշանում եմ. դու էլ քո ոչխարներդ ժողովիր, հիմա Գոզալն սպասում է քեզ: Օ՛հ, Մամազ, նա սատանայ է, կըհասկանայ ամեն ինչ . . .

— Թող հասկանայ, ինչ անենք:

— Չէ՞ որ ամօթ է . . .

Գիւլէն վերցրեց կուժը, և սղնձէ փոքրիկ թասով սկսեց ջուր լցնել:

— Մամադ, մի «բէրիկ» փչիւր, տեսնեմ՝ ոչխարներդ խօսքիդ հնազանդ են:

Մամադ-բէգը սրինգն առաւ ձեռքը և սկսեց նրաագել: Հօսը բաւականին հեռացել էր. առաս բուսականութիւնը նրանց քաշել էր շատ յսուաջ. բայց տիրոջ հրաւէրը խիղճն նրանց յետ դարձրեց. անմեղ անասունները գլուխները զետիկն խոնարհեցրած, սկսեցին դիմել դէպի սրինգը: Գիւլէն կուժն ուսին դրեց, Մամադ-բէգին «մնաս բարով» ասաց և շտապ քայլերով սկսեց հեռանալ: Մամադ-բէգի աչքերը չէին բաժանուում նրանց: Նա փոխեց սրնգի եղանակը, սկսեց «Լնոր—դա—րնոր»: Ինչպէս «բէրիկ» եղանակը ոչխարներին է քաշում դէպի իրան, այնպէս էլ այս եղանակը քելըդ երիտասարդ աղջիկներին ու տղայոց սրբտերն է գրաւում: Ի՞նչ քարասիրտ երիտասարդ պէտք է լինէր, որ գիտենար այդ եղանակի հետ կապուած ցաւալի պատմութիւնը, և այժմ լսելով այդ սրնգի ձայնը, մի քանի ըսպէ կանգ չառնէր և ուղարու չըսէր . . .

Գիւլէն հասկացաւ, թէ ինչ նպատակով նա փոխեց սրնգի եղանակը—երան սպասեցնելու համար: Կուժը վայր դրեց ուսից, և սպասեց:

Մամադ-բէգն արգէն հօսը ժողովել էր. ոչխարներն առաջնորդ երկարամիտութեամբ ն էր է ն (սօխաղ) սկսել էր լիզել նրա ձեռքերը, և մերթ երկարապտոյտ եղջիւրներով թեթեւ հարւածներ տալ, կարծես խնդրելով, որ երկար չսպասէ:

Նա առանց սրնգի եղանակը փոխելու դիմեց դէպի Գիւլէն. ն էր է ն իր խմբով հետևեց նրան:

— Ինչո՞ւ ես սպասում, Գիւլէ,— ասաց նա քաղցր ժրպիտով:— Չէ՞ որ շտապում էիր . . .

— Ինչքան սատանայ ես Մամադ . . . Ինչո՞ւ համար էիր սրնգիդ եղանակը փոխում «լնոր-դա-րնոր» . . .

— Նրա համար, որ սպասես միտսին գնանք: Ինչո՞ւ ես շտապում:

— Վախենում եմ հայրս եկած լինի, իմանայ . . .

— Մի վախիլ, Գիւլէ, ես գիտեմ, որ հայրդ ոչ թէ այսօր, այլ սրանից մինչև տաս-քսան օր հազիւ գայ . . . Լսի՛ր, Գիւլէ ջան, ես քեզ մի բան պիտի հարցնեմ, բայց ուղիղը պիտի ասես. եթէ ուղիղ չասես, հաւատացած եղիր, որ շտա կընեղանամ, յետոյ էլ ինչքան ուզես, չես կարող սիրտս հանգստացնել . . .

— Հարցրու տեսնեմ, ես ոչինչ չեմ ծածկիլ քեզանից:

— Ինչո՞ւ համար էիր ասլա մինչև այսօր ծածկում. քանի՞ քանի՞ անգամ եմ խնդրել, բայց դու միշտ ծածկել ես:

— Այդ ի՞նչ բան է, Մամադ, որ այդքան վրդովել է քեզ:

— Ի՞նչ հօ չասացի՛ր, բայց ես բոլորն իմացայ: Ես իմացայ, որ դու և ուսուպի Օտօի հարս Սօնէն կուել էք: Ա՛խ կանայք, կանայք, որքան նախանձոտ էք դուք, որքան կրքոտ... Իմացայ, թէ ինչպէս մեր նշանադրութիւնից մի քանի օր միայն յետոյ, նա քո սիրտդ կտարել է, ասելով Գիւլէ, ինչո՞ւ մի օրինաւոր մարդու որդի չընտրեցիր քեզ ամուսին, պիտի գնայիր ու գայիր քաղցած Հասօի տղայ Մամադին ընտրէ՛ր: Այն էլ իմացայ, թէ դու ինչ գեղեցիկ պատասխան ես տուել նրան... Բայց, Գիւլէ, գիտե՛ս ինչն է ստիպել նրան այդպէս վերաւորել քեզ, այդպիսի կծու խօսքեր ասել,— չարանենդ նախանձը, ուրիշ ոչինչ... Ինքը քանուհինգ տարի մնաց տանը, ոչ մի օրինաւոր երիտասարդ նրան չուզեց: Նա մի օր այս երիտասարդի վրայ աչք ձգեց, միւս օր մի ու-

ընչ երկտասարդէ, շատ ուզեց իրան սիրեցնել տալ, բայց չըրաջող-
 ւեց: Խեղճ հօր ճարը որ կտրուեց, ունեցած ստացւածքը մի մասն
 էլ դրեց վերան, հաղիւ կարողացաւ գլխից «առդ անել»... այն էլ
 ձև տուաւ,—խընքոտ Շամօին . . . Ի՛նչ անեմ, Գիւլէ, տղայ
 չէ, թէ թուր ու վահանս առնեմ, ասպարէզ հրաւիրեմ: Բայց
 վնաս չունի, մի օր դէպքը կըբերի . . .

—Մամադ ջան, ինչո՞ւ ես մի լիմար բանի համար այդքան
 մտածում. ասաց,—պատասխանն էլ ստացաւ . . .

—Այդ էլ մի կողմը կենայ, Գիւլէ. նշանադրութիւնից
 յետոյ ես մի տեսակ տիրութիւն, մի տեսակ թախիժ էի նրկա-
 տում քո դէմքի վրայ. և քանի անգամ դրա պատճառը հար-
 ցըրել եմ, դու միշտ աշխատել ես ծածկել, խաբել ինձ . . .

—Ասէի, Մամադ, որ զնայիր կռիւ-զալմաղալ սարքէ՛ր:

—Չէ, եթէ դու ինձ ասէիր և մի և նոյն ժամանակ
 խնդրէիր, որ անուշադիր թողնեմ,—ես քո խօսքը չէի կտրել,
 ինչ էլ որ լինէր նա . . . կընշանակէ դու չէիր վստահանում
 ինձ վրայ: Չէ, Գիւլէ, այդ բառ բնաւորութիւն չէ, այն օրից
 երբ մենք իրար խոստացանք հաւատարիմ լծակիցներ լինել,
 մեր մէջ ծածուկ ոչինչ չըպէտք է լինի: Ծածկել նշանակում է
 չըվստահանալ, չըվստահանալն էլ՝ կասկածել: Երբ այս այս-
 պէս լինի, ուրեմն մեր բոլոր խոսակցութիւններն էլ իրար հետ
 կեղծ և շինծու կըլինին . . . Ես գիտեմ, Գիւլէ, դու բարև
 մտքով էիր ծածկում, բայց հաւատացած եղիր, որ դա կարող
 է սովորութիւն դառնալ . . .

—Լա, Մամադ ջան, մի նեղանար. ես այսուհետև ոչինչ
 չեմ ծածկիլ քեզանից . . .

Հասել էին արդէն բլրի կատարին. Մամադ-բէգը կանգ

առաւ այդտեղ, իսկ Գիւլէն արագ քայլերով դիմեց դէպի վը-
 րանները:

Գիւլէն ու Մամադ-բէգը այնուհետև միշտ առիթ էին
 ունենում իրար տեսնել. Նիր-կանին նրանց համար ներկայան-
 էր դարձել, որ առիթ էր տալիս յաճախակի տեսակցութեան:

Մի անգամ, երկուր խօսակցութիւնից յետոյ, Մամադ-բէգն
 ասաց.—Գիւլէ, սրի մի բան էլ ասեմ.—դու գիտես, որ աշի-
 րաթ քերդերի տասը մարդուց մէկը իր խիկական մահով հա-
 գիւ է մեռնում, միւսները կամ ցեղական կռւի մէջ են սարս-
 ւում, կամ տաղաղութեան ժամանակ: Բացի սրանից՝ դու
 գիտես, որ ես շատ թշնամիներ ունիմ, այժմ նրանց վրայ ա-
 ւելացան և նորերը, նրանք, որոնք քեզ ուզում էին, բայց
 մերժումն ստացան: Հայդարցի Օմար-աղի տղէն այդ պատճա-
 ռով է թշնամացել, Ջընկըցի Ասադ-աղի տղէն նոյնպէս, Ջա-
 ւալցոց մի մասն էլ՝ արդէն մեր ամբողջ ցեղի հետ է թշնա-
 մի. Մամիանցի Շամօն էլ նրա համար է թշնամացել հետս,
 որ ուզում էր իր աղջկին ինձ տալ, չառայ: Հիմա այս բոլորն
 էլ ինձ հետ թշնամի են, բոլորն էլ ուզում ինձ վնասել.
 Բայց ես ոչ մէկից չեմ վախենում, միայն մի վերջ ունիմ,
 այն է, որ՝ մի հասած եղբայր չունիմ, որ գիտենամ եթէ մէկն
 ինձ վնասելու լինի, նա իմ մահից յետոյ վրէժս կառնի, չի
 թողնիլ որ արիւնս կորչի . . .

—Ես քեզ եղբայր, Մամադ ջան, մթթ է մի եղբոր չափ
 վստահութիւն չունիս ինձ վրայ:

—Գիւլէ, այդ ասացիր՝ միտքս ընկաւ. լիշո՞ւմ ես անցեալ
 տարի, որ Հայդարցիք Ջընկըցի Ասադ-աղի եղբորը՝ Ալօին սպա-
 նեցին, որ Ալօի չորս կինն էլ միասին շաշխանէքն առան ու

գնացին Հայդարոց վրայ. մինչև Զընկոց ցեղը նրանց յե-
տևից հասաւ, արդէն նրանք Հայդարցի Օմար աղի վրանը
գնտակի տակ էին տուել, և այնտեղ էլեթ հինգ հոգի սպանել:
Արթ, Գիւլէ, դու էլ ինձ խոտացիր, որ եթէ ինձ մի փորձանք
տատահի, Ալուի կանանց նման վրէժս կառնես . . .

— Մամադ ջան, այդ ինչէր ես մտածում. մի անգամ էլ
եթէ այդպիսի բաների վրայ խօսես՝ կըխոռովեմ, էլ հետդ չեմ
խօսիլ:

— Ինչու ես նեղանում, Գիւլէ, իմ ասելով՝ հօ չեղաւ, բայց
փորձանք է, ես թնչ գիտեմ . . .

— Ո՞վ պիտի լինի, որ կարողանայ քեզ վնասել, չէ՞ որ մեր
ամբողջ ցեղը քո ձեռքին է:

— Մեր ցեղից քաջ ցեղեր չըկան.

— Ես գիտեմ, որ ինձ ուզողներէց ոչ մէկը քո քաջութիւնը
չունի և ոչ նրանց ցեղը՝ մեր ցեղի:

— Ամեն անգամ թշնամին բացարձակ չի գալ, որ մեր
ցեղը կանգնի և գիմադրի նրանց: Կամ թէ՛ քեզ ուզողներէց
մէկը գուցէ յանկարծ դուրս կըգայ և ինձ կըհրաւիրէ մե-
նամարտի. ես հօ չեմ կարող չըգնար: Նա էլ գիտենալով՝ ես
եղբայր չունիմ, որ վրէժեղիւր լինի, սամարդաբար այնպիսի մի
հարեւած կըտայ, որ մահ կըպատճառէ:

— Ե՛հ, Հայդարցի Օմար աղի ու Զընկոցի Սաադ աղի դեղ-
նած յամուկները պիտի յամարձակին քեզ մենամարտի հրա-
ւիրել . . .

— Այդպէս մի ասիւր, Գիւլէ, քաջութիւնը, անվեհերու-
թիւնը գեղնածի ու գեղեցիկ, բարձրահասակի ու կարճահասա-
կի մէջ չէ: Նիհար ու գեղնած տղէք կան, որ սատը գեղեց-

կատեսիլ և առողջ կազմուածքի տէր մարդոց բանի տեղ չեն
դնիւ: Լսիր, քեզ մի պատմութիւն անեմ, որ հաւատաս, թէ
քաջերից աւելի հօգորներ էլ կըլինին.— Գու գիտես, որ հիմա
բացի վրրի/թրպպնէրից (քերդ գնչուներ), աշիրաթները եթէ
սարում պատահեն մի թաք ճանապարհորդի, կամ մի մարդ
ու մի կնիկայ, եթէ գիտենան անգամ՝ նրանց մօտ լիտուն հաս
կտրմիր ոսկի կայ, նրանց չեն դիպչել, բուն չեն ասիլ, բարև
կըտան ու անց կըկենան * : Գիտե՞ս ինչու համար են աշիրաթ-
ները այսպէս վարում.— Հայրս դեռ էլի պատմում է, որ սրա-
նից երեսուն-քառասուն տարի առաջ, Չալայցի Շահար աղէն
աչքը ձգում է Արծափցի մի հայ հարսի վրայ. ուզում է ան-
պատճառ նրան փախցնել, որ տանի թուրքացնի և իրան կին
առնի: Գիտե՞ս, Գիւլէ, Արծափցի հայերը շատ քաջ են, միւս
հայերի նման չեն: Շահար աղէն չի կարողանում իր նպատա-
կին հասնել: Վերջապէս մի անգամ, երբ վերջինս չորս ձիաու-
րով վերադառնալիս է լինում Մուշի կողմերից, ճանապարհին
մի աղբիւրի մօտ նստում են քիչ հանգստանալու, տեսնում են
ահա մի հարս հեծած ձին, մի երիտասարդ տղայ էլ քօլօզը
թեք դրած, մի մահակ ձեռին, վահանը մէջքին, ձիու սանձը
բռնած՝ դալիս են իրանց կողմը: Որ քիչ մօտենում են, Շահար
աղէն ինչ է տեսնում.— այն հարսը, որին ինքն ուզում էր, և
նրա ամուսինը: Ուրախութիւնից սիրտը դողդողում է. վեր է
թռչում տեղից, թուրը հանում է և վազում դէպի նրանց: Ըն-

* Տասնեակ տարիներ առաջ, աշիրաթ քիւրդերի մէջ այս օրէնքը
անխախտ պահում էր, բայց այժմ, ինչպէս նաեւ շատ նախնական
լու սովորութիւններ անյայտացել են, նրանք աւելի են վայրենացել . . .

կերներն էլ շիտթւած, դէնքերը թողնում են գետնին և իրար ետեւից դիմում այն կողմը: Հայ երիտասարդը նրանց տեսնելուն պէս բաց է թողնում ձիու սանձը, վէր է բերում ուսից վահանը և լառաջ գալիս: Կինը երկիւղեց սխուժ է լաց լինել, ճշարտ երիտասարդը շտախուժ է դէպք նա և ձեռքն մտահալը ցոյց տալով, ասում. «Չայնդ կտրելը, եթէ ոչ՝ փայտին առաջին հարւածը դու կստանաս»: . . . Շահար աղէն մօտենալուն պէս՝ սրկ մի հարւած է վրայ բերում տղին. բաց նա վահանով պաշտպանւում է և մի դագանակ իջնելով Շահար աղի գլխին, գետին է փռում նրան: Գալիս է երկրորդը, նրա գլխին էլ նոյն խաղն է խաղում և վերջապէս չորսին էլ այդպէս իրար ետեւից գետին է փռում: Հինգերորդը որ տեսնում է այս անակնկալ դիպածը, մնում է ապշած, և երկիւղեց սուրբ մի կողմ ձգելով, ընկնում է աղի ոտները և աղաչում.

— Ի սէր Աստուծոյ, այն Հայ, մեր ցեղի անուներ մի արատաւորիք, թող, քո ճանապարհովդ գնա. այստեղի քիւրք ցեղերը թող չիմանան, թէ Չայնցի Շահար աղի խմբին մի թաք հայ աղայ յաղթել է . . .

— Տղան պատասխանում է.

— Պէտք է ձեզ, իւրաքանչիւրիդ իբրև մի չնչին առարկայ՝ բարձեմ ձիուս վրայ, և տանեմ մօտակայ քիւրքի գիւղը, թող այնտեղ թքեն ձեր երեսին, որ միւս խնդամ այս տեսակի մարդու թիւն չանէք . . .

Քիւրքը կրկին սխուժ է աղաչել, նրա ձեռքն ու ոտքը համբուրել, բաց հայր վախենալով՝ մի գուցէ թույլ տայ հեռանան և հեռուից գնտակներ արձակեն իր վրայ, այն քրքի

դէնքերը թրելով, տալիս է իր կնոջը, ասելով. «Սրանք էլ առ քեզ, միւս անգամ էլ որ քիւրքեր գալու լինին, փոխանակ լաց լինելու, ինձ խանգարելու, ինքդ էլ մի կողմից օգնիր, որ շուտով գործը վերջացնենք». . . Նրանք հեռանում են քիւրքերից, խոտաճալով՝ ոչ ոքի չասել այդ դէպքը: Գրանից յետոյ Շահար աղէն պատուելում է իւր ողջ ցեղին, որ երբէք թաք ճանապարհորդի, կամ մի մարդու մի կնկայ՝ չըկողոպտեն. իսկ ինքը գնալով Արծալի, իջնում է այն հայի տանը և նրան իրեն քիւրք և շենում: Շահար աղի դրած այդ կարգը մտնում է և միւս աղիւրաթ ցեղերի մէջ:— Տեսնում ես, Գիւլէ, Շահար աղի պէս մարդը, որն քաջութիւնը լայտնի է բոլոր քրդերին, և որն անուներ մինչև հիմա սարսափ է բերում նրանց թշնամի ցեղերին, այնպիսի մարդը, յանկարծ յաղթում է մի հայից. մի հայից, որն նման տասնին մարդու հաշի չէր դնել . . . Այդպէս էլ ես. թէպէտ մեր ցեղի մէջ անւանի եմ, բայց գուցէ ուրիշ ցեղերի մէջ ինձանից տասնասպառիկ աւելի քաջ երիտասարդներ լինին, գուցէ քո միւս ուզողները աւելի քաջ և հզօր են:

— Հասկանում եմ, Մամադ ջան, դրանով դու ուզում ես, որ ես խոտանամ՝ եթէ քեզ մի փորձանք պատահելու լինի, վրէժխնդր լինիմ . . . Ասուած մի արասցէ, Մամադ. բաց դու հաւատացած եղիր, որ քո Գիւլէն էլ եղբոր նման կանգնած է քամակիդ. քեզ մի փորձանք պատահած ժամանակ՝ Ձընկըցի Ալօի կանանց նման հրացանը ձեռքից վէր չի դնել, մինչև ոտիկդ գետին չըգլորէ . . . Մամադ ջան, վստահ եղիր Գիւլէից վրայ, նա իր խօսքից յետ դարձող չի, նա սրբութեամբ կրկնատար է իր տւած բոլոր խոտումները:

—Այսուհետև մեռնելու էլ լինիմ, Գիւլէ, էլ հոգըս չէ, քանի որ ինձանից յետոյ արիւնս գուր չի կորչիլ, վրէժս առնող կայ:—Ռէ, Գիւլէ ի նշան մեր այս խօսակցութեան թող մի համբոյր էլ տամ քեզ . . .

Գիւլէն չըմերժեց:

Գ.

Երկու սիրահարներն այս խօսակցութիւնը համարեա վերջինն էր իրար հետ, որ տեղի ունեցաւ մի քանի օր միայն առաջ, նախ քան Ջալալցիներէց ոչխար գողանալու դեպքը: Մամադ-բէգը կարծես նախադգուս էր, որ այդպիսի մի փարձանք պիտի պատահի իրան:

Գիւլէն անհամբեր սրտով սպասելով նրա վերադարձին, երբ լսեց եղբօր բերած բօթը, առանձնացաւ վրանի փոքրիկ մասներէց մէկը, և սկսեց խելագարի սէս մագերը փետելով գոռգոռալ: Հարեւաններն աղջիկներն ու հարսները շքապատել էին նրան, բայց ոչ ոք չէր կարողանում զսպել. նա անդադար փետում էր իր մագերը. կարծես դրանք լինէին Մամադ բէգի թշնամիքը, դրանց պոկելով՝ նրա թշնամիներին էր ջընջում . . . Մամադ-բէգի քոյրերն էլ արդէն իմացել էին բօթը, մեծ սուգ ու շուանը նրանց տանն էր: Գօզալը լսելով Գիւլէի գոռգոռոցը, եղբօր քաջագործութիւնները բարձրաձայն երգի եղանակով գովարանելով, դիմեց նրանց վրանը: Երկուսն իրար տեսնելով, փաթաթուեցին միմեանց և սկսեցին աւելի ևս ողբալ ու կօծել: Գիւլէն կարծես մի բան մտաբերեց չանկարծ. նա թողեց Գօզալին, մոռացաւ ողբը և դուրս թռաւ վրանից. կանայք և աղջիկք հետևեցին նրան: Նա վագեց դէպի վը-

բանից փոքր ինչ հեռու արածող ձիանքը, արձակեց մի սպիտակ ձիու, առաջին ոտքերը, որ կապած էին իրար հետ կարճ շղթայով, որպէս զի արածելով շատ հեռու չըգնայ, և ետևից (բաշից) բռնելով՝ բերաւ վրանի առաջը: Առանց ուշադրութիւն դարձնելու հարսների և աղջկանց հարցերին, նա շտապով թամբեց ձին, սանձը դրեց բեշտնը, ներս մտաւ վրանը և սկսեց շորերը հագնել ու գլուխը կապել: Այդ ժամանակ միայն Գօգալը լալակթեամբ մօտեցաւ նրան և հարցրեց.

— Այդ ի՞նչ ես անում, Գիւլէ:

— Մթթէ չըգիտես ինչ խոստում եմ արել Մամադիս . . . Գնում եմ խոստումս կատարելու, — պատասխանեց Գիւլէն վրդովւած և շարունակեց իր գործը:

Գօգալը այժմ միայն հասկացաւ Գիւլէի դիտաւորութիւնը:

— Եւ մթթէ իմ մէջ այնքան մեռած է եղբորս սէրը, որ չըհետևեիմ քեզ, Գիւլէ: Եթէ Մամադ-բէգին սերում ես, սպասիր մինչև ես էլ պատրաստեիմ քեզ հետ գալու, մինչև ես էլ ձիս պատրաստեմ, — ասաց Գօգալը և վազեց դէպի իրանց վրանը:

Լոյսը նոր էր սկսել բացել:

Մի տեսակ կենդանութիւն, մի տարօրինակ իրարանցում էր ընկել ամբողջ ցեղի մէջ: Այսօր նրանք զբաղւած չէին իրանց սովորական պարագմունքներով. կանայք փոխանակ ոչխարները կթելու, իրանց ամուսինները ձիանքն էին թամբում, պատրաստում. մանուկներն ու պատանիները փոխանակ ուլերն ու գառներն առաջներն արած դիմելու այս ինչ կամ այն ինչ ծաղկազարդ բլուրը կամ սառնորակ աղբիւրը, — բռնել էին իրանց հօր ձիու սանձը, որ մայրը չըժլատարանայ թամբելու. նրանցից ոմանք խնդրում էին մայրերին, և մինչև անգամ բայ

լինում, որ նա միջնորդի հօրը՝ իրանց էլ հետները տանելու. Հասակաւորներն ու երիտասարդներն էլ վրաններում հագնւում էին, գէնքեր ջոկում, սրբում, և զրահաւորուած: Այսօր այդ ցեղը աւելի նմանում էր մի զօրաբանակի, իր բոլոր պատրաստակաւորութեամբ: Քիչ ժամանակից յետոյ, երեք հարիւր հոգուց բաղկացած մի խումբ հաւաքեց Զաւհար աղայի վրանի առաջ և սպասում էր Աւդալին, որ ճանապարհ ընկնէին Նրանք բոլորն էլ միակերպ զարդարւած էին գեղեցիկ գէնքերով. առհասարակ ընդհանուր ցեղական կոիւնների ժամանակ, նրանք աշխատում են որքան կարելի է փառազարդ և մեծաշուք դուրս գալ թշնամիների առաջ: Բոլորն էլ մէջքներին ունէին վահան ու հրացան, կողքներից քարչ ընկած երկար կեռ սրեր, մի-մի գոյգ տորձանակ խրած մէջքներին, մի-մի գոյգ մեծ տորձանակներ էլ իրանց պահարաններով կախած թամբի այս ու այն կողմից: Բոլորի ձեռքին էլ երևում էր երկայն եղեգնեայ նիզակ, սուր եռանկիւնի սրղըստեայ ծայրերով, որ միացած էին եղեգնի հետ դեղին կամ սպիտակ թիթեղեայ մեծ զնդով:

Գուրս եկու. Աւդալը վրանից: Նրա կիներն արդէն ձին թամբած, պատրաստ սպասում էր. նա հեծաւ ձին և առաջ ընկաւ: Ողջ այրուձին հետեւեց նրան: Նրանց ետևից լուում էր ծերունիների և կանանց ձայնը.

— Յաջողութեամբ վերադառնաք . . .

Բ.

Գեղեցիկ է Գայլասի լեճը, գեղեցիկ իր դերքով և գեղեցիկ իր շրջապատով։ Նա շրջապատուած է Արարատ-կան ծաղկազարդ լեռներով, որոնք կարծես մի-մի գուգ-լած-գարդարուած նորահարսներ լինին, ձեռքերը իրար կցած՝ և սար բոլորած, իրանց մէջն առնելով փոքրիկ լճակը։ Եւ նա իւրև մի սարդ հայլի, ցոյց է տալիս նրանց իւրաքանչիւրին իր գեղեցիկ պատկերը։ Նա հանդարտ ծիւղն է և իր հեգիկ ալիք-ները անդադար յաջորդում են իրար, որոնցից իւրաքանչիւրը սա-րունակում է իր մէջ շրջակայքի մի հրաշալի տեսարանը—սառ-կերը։ Նրջակայքի իրական տեսարանները այնքան սպռնեցու-թիւն չեն անում մարդու վրայ, որքան նրանց անդրադարձու-մը սարց՝ լճիս կոհակների մէջ։ Գայլս են իրար յետևից կո-հակները, ներկայացնելով իրանց մէջ այն ամենը, ինչ-որ գտնը-ւում է լճակի շուրջը՝ սար, ձոր, կանաչ, ծաղիկ, մարդ, ձի-գոմէշ և այլն, դրանց հետ և բազմատեսակ ձկներ, որոնք ա-դատ անհոգ լողում են կոհակների մէջ՝ կարծես գոյնզգոյն ծաղիկների և կանաչ խոտերի վրայ։ Մարդ տեսնելով այդ բո-լորը, հիանում է, սքանչանում և ընկնում մի տեսակ կախարդա-կան սալաւորութիւնների տակ։ Հին ժամանակներից սրղէն, շատ առասպելական աւանդութիւններ կան այս լճակի մասին։

Պատմում են, որ սրա մէջ կան հրեղէն գոմէշներ և ձիանք. և թէ Քեօրօղու Առաթն էլ սերւած է եղել սրա միջի հրեղէն ձիանցից, Իրըն մի կախարդական ամրոց, լճի կենտրոնում բար-ձրանում է մի հինաւուրց շինածք, որ աւելի բերդի նմանու-թիւն ունի։ Հեռւից նայողը կարող է երևակայել, թէ ինչ փա-ռաւոր անցեալ է ունեցել այդ, թէպէտ այժմ աւերակ և քայ-քայւած, բայց մեծաշուք ամրոցը . . . Թէպէտ շատ դարեր կն անցել, բայց մաշող և ուտիչ ժամանակը չի կարողացել նրան բոլորովին ձգել իր հին փառքից։ Նա դեռ այժմ էլ կար-ծիս իր ողջ շրջակայքի ելխողն է, որ կանդնած է լճի կենտրոնում։ Այլքները խլում են նրա սրտերին և կրկին ամօթխած յետ դառ-նում։ Նա յամառութեամբ կուռում է ժամանակի և ալիքների հետ։

Վարդանմտն արշալոյսը բացւում էր։ Առեւերի կատար-ների վրայ հորիզոնը շառագունել, կարմրել էր, կարծես աւե-տելով լճակին, թէ՛ ահա գալիս է լուսաձաձանչ արեգը։ Եւ ահա նա բացու իր վարագոյրը և հարտ-հարտ սկսու վեր բարձրանալ, սիւեւելով իր կենսատու ճառագայթները լճի և շրջակայքի վրայ։

Հէնց այդ միջոցին, երբ աղօթարանը նոր էր բացւում, լճի արեւմտեան ափերով անցնում էին երեք սպառազիւնած ձի-աւորներ։ Նրանք սրնթաց արշաւում էին դէպև հարաւ-արե-մուտք, առանց ուշադրութիւն դարձնելու շրջակայ հրաշալի տեսարանների վրայ։ Նրեքն էլ քրդուհիք էին, գեղեցիկ դէմքով՝ և արձակ մագերով, որոնցից մէկը, որ առաջից էր գնում՝ հեծել էր մի սպիտակ նժույգ, իսկ միւսները՝ կարմիր։ Վարծես նրանք ելէք դեցուհիք լեռէլն, որոնք դուրս գալով լճի ամրոցից ըզ-

բօսնում էին իրանց հրեղէն ձիաներով: Նրանք սրընթաց անցան լիճք և անյայտացան մօտակալ լեռների լեռեր:

Նրանցից առաջինը Գիւլէն էր, իսկ միւս երկուսը Մամադ-բէգի քոյրերը, որոնք գնում էին նրա վրէժն առնելու Ջալալ-ցի Հասան-աղայից, որ սպանել էր նրան: Յեղի սղամարդիկը դեռ նոր էին պատրաստում այդ միւսնոյն նպատակին գնալու համար, երբ նրանք դուրս եկան վրաններէր: Ասնալք տեսան արդ, բայց ոչ ոք արգելք չեղաւ նրանց. իսկ սղամարդիկ ուշ իմացան և իրանք էլ նրանց լեռերէր գնալով, աշխատում էին հասնել և լետ դարձնել. բայց նրանք շատ հեռու էին:

Սպիտակ ձիաւորը Գիւլէն էր, որ նստած իր գեղեցիկ նր-ժոյգի վրայ, անհամբեր շտապում էր շուտ տեղ հասնել. նա առանց ուշադրութիւն դարձնելու ընկերներէն, մտրակում էր ձիուն և առաջ սլանում: Նրա աչքերը փայլում էին բարկութեան կրակով և կարծես, նժոյգի պայտերի քարերին ընդհարումէր չտուազացած կայծերի նման, ուղում էին իրանք էլ կրակ դուրս ցայտել: Ան սաթի գոյնի մտղերը արձակ փուլած էին նրա լայն թիկունքին և ծածանում էին ինչպէս սիգաւէտ խոտը մեղմիկ գեփիւււղի և ինչպէս իր նժոյգի սպիտակահեր ագին: Ոսկեթեւ-ճաղկանկար քօֆիւն * կարծես մի ականակուռ թագ լինէր, որ տալիս էր աւելի ևս գեղեցկութիւն՝ նրա առանց այն էլ գեղեցիկ դէմքին: Աստղաձև ոսկէ յղճեմը յարմարում էր նրա ճակատի և ներքին ծնօտի վրայ եղած կապտադոյն խա-

* Միսլմուրից կամ կերպասից կոլորած և գլխարկ է, որի առջեւ կողմը նախշում են ոսկեթեւերով եւ որը նման է Տփիսիսեցի կանանց ճակատին կրած չի ի տ ա-կ օ պ ի ի ն:

լերին, որոնք արհեստական կերպով մանկութիւնէր դրոշմւած էին: Հագել էր երկայն կարմիր չթից անթաղի և կարմիր չուխից կրծկալ: Այս բոլոր գեղեցկութեամբ նա նմանում էր հինառասպելական այն դիւցազնուհիներին, որոնք մի ժամանակ բնակում էին այդ լեռներում, և այդպէս գեղեցիկ հագնւած, սպառազինւած՝ իրանց նաժիշտներով գնում էին օգնութեան իրանց այն սիրելոյն, որ ընկած էր լինում իրանից աւելի հզօր թշնամիներէ ճանկը . . .

— Գիւլէ, հաստատ իմացար որ Հասան-աղէն է եղել ըսպանողը, հարցրեց Գօզալը հասնելով նրան:

— Աւղալն ասաց, որ Հասան-աղէն ևս թշնամիներէ մէջ է եղել, բայց թէ Մամադին ո՞վ է խբել, — յայտնի չէ:

— Գուցէ Հասան աղան չի խբել . . .

— Բաւական է որ խումբը նրանն է եղել և ինքը խմբի մէջը, ուրեմն նա է մեր թշնամին, պէտք է մենք նրանից առնենք մեր վրէժը: Նրան սպանելով, մեր վէրքը չի առողջանալ:

— Մամադ-բէգը չի կենդանանալ, բայց դրանով մենք պաշտպանած կըլինինք հանգուցեալի և մեր ողջ ցեղի պատիւը . . .

Ուրիշ ցեղեր չեն նախատիլ մեզ. թէ՛ Մամադ-բէգին Ջալալցիք սպանեցին, իսկ նրա նշանածն ու քոյրերը երեսնաների պէս բաւականացան տանը նստել ու ողբալ . . .

Թէպէտ ամբողջ ցեղը ահա գնում է նրա վրէժն առնելու, բայց նրանք գնում են միայն ցեղի պատիւը պաշտպանելու, իսկ մենք, բացի ցեղի պատիւից, պիտի պաշտպանենք և հանգուցեալի պատիւը և մեր ընտանիքներէ . . .

Տեսնում էք, շատ ցեղեր են իրար հետ կուրել, շատ մարդիկ են սպանել, բայց ոչ մէկի անունն էլ այն-

բան չի յեղում, որքան Ջրնկըցի Սլօի կանանց անուճները: Ուրեմն՝ կամ պէտք է մենք էլ Մամադ-բէգի, Մասօի հետ մեռնինք, կամ պէտք է նրանց կորցրած պատիւը լետ առնենք Հասան-աղայից, իր կարմիր արեւնով . . .

— Գիւլէ, մենք այսպէս գնում ենք մի ողջ ցեղը վրայ և ոչ թէ Հասան-աղայի վրայ միայն. երեք աղջիկ մի ամբողջ ցեղի վրայ գնայ և էլ չի լետ գայ. — ես կարծում եմ ոչինչ էլ չենք կարող անել:

— Գօզալ, Գօզալ, Մամադ-բէգից լետոյ՝ դու ախոսում ես քո կեանքը: Մենք հօ թմբուկ ածելով չենք գնալ, որ ամբողջ ցեղն իմանայ և դուրս գայ մեր դէմ, ու դեռ վրէժներս չառած, գետին գլորելինք: Ձէ, այդպէս չենք անել. Մաղկանց սարի ետևի կողմից կրբարձրանանք և ուղիղ կրքչենք ձիւսներս դէպ Հասան-աղայի վրանը, հէնց դռնից երեքս էլ միասին հրացաններս կուղղենք դէպի նա . . . Նրանից լետոյ սպանւինք էլ վնաս չունի. մերն այնքան լինի, որ նրան սպանենք . . . Գօզալ, դու այս ճանրսպարհներին ծանօթ ես աւելի, արդեօք ի՞նչ ժամանակ կարող կլինինք տեղ հասնել:

— Զայնէն աւելի ծանօթ է:

— Ար այսպէս գնանք, արևը դեռ մայր չըմտած կըհասնինք, — ասաց Զայնէն ձիւս վրայից շուռ գալով դէպի արևը և ուշադրութեամբ նայելով:

— Նրանի՛ թէ քիչ լուսով հասնինք . . . Բշեցէք . . .

Չ.

Արեգակի վերջին ճառագայթները դեռ չէին անցալտա ցել մօտակա լեռների կատարներից, երբ այս երեք ձիւսորդները բարձրանալով Մաղկանց լեռան արևմտեան կողմից նրա կատարին, սիսել էին ձիւսքը հանդարտ քշելով՝ ցած իջնել դէպի արևելեան կողմի բանջերում եղած Զալալցոց վրանները: Լեռան կատարը հասնելուն պէս Գիւլէն կանգ առաւ, ցած բերաւ հրացանը ուսից, չախմախը վեր բարձրացնելով, կողքից քարչ ընկած արծաթապատ-եղջերեայ վառօդամանկց միքիչ վառօդ ցրեց չախմախի և կայծաքարի արանքը եղած փոքրիկ կիսախօղովակի մէջ — աղօթոյի արեց, և հրացանից քարչաւած՝ շօրեց կարած փոքրիկ բարձիլը դնելով կայծաքարի վրայ, չախմախը ցած թողեց նրա վրայ, որ երկուսը չըլիւին և չանկարծ հրացանը բռնկւի, ու դարձաւ միւսներին:

— Գուք էլ պատրաստեցէք, աղօթոյի տէք . . . Տեսնում էք այն ամենի կենտրոնում եղած մեծ վրանը. — աւելացրեց նա ցուցամատը պարզելով դէպի այն կողմը, — այն է Հասան-աղայի, վրանը ուղղակի այն կողմն ինձ հետևեցէք, և մինչև չատեմ՝ դէնքի ձեռք չըտաք . . .

Նրեկոյան բէրի ժամանակն էր, Ջալալցիք ամենքն էլ մեծ, փոքր թողել էին վրանները և հաւաքել վրաններից փոքր ինչ ցած եղած հարթ տեղը, որ նրանց բէրատեղին էր. վրանները կարծես անմարդաբնակ էին դարձրել. միայն փոքրիկ, կիսամերկ մանուկներն էին, որ խումբ-խումբ հաւաքւած մի քանի վրաններէ աւազ, իրար հետ փոքրիկ մահակներով կուռում էին—խաղում էին. . . Բնութիւնը կարծես զբանց ստեղծել էր միայն կուռելու համար: Բեռ շատ փոքր հասակից, նրանք սովորում էին ընտելանալ այդ տեսակ կեանքին, դեռ մանկութիւնից նրանք սովորում էին անվեհերութիւն, սովորում էին ճնշել իրանցից թոյլերին և հպատակեցնել իրանց, յախշտակել նրանց ունեցածը . . . այդ էր նրանց խաղը, ուրիշ ոչ մի օրէնաւոր մանկական խաղ չըզխտէին: Սեւ չլրաւի, որտեղից նրանք կարող էին գիտենալ, քանի որ նրանք աչքները բանալուն սէս՝ մեծերից այդ էին տեսնում, և այդ էլ սովորում էին . . . Բացի սրանից՝ չէ՞ որ նոյն իսկ մեծերն էին նրանց սովորեցնում այդպէս անել, որպէս զի դեռ փոքրուց ընտելանային իրանց սպասելիք սպազայ կեանքին . . . Հարագատ, ծնող մայրը տեսնելով 7—8 ամեայ մանկանը կուռից արիւնաշաղախ լետ դարձած, լւանում էր նրա արիւնը, մի փոքր գուրգուրում էր և անմիջապէս հրամայում, որ կրկին գնայ և այս անգամ ինքը ջարդէ իր գլուխը ջարդողի գլուխը . . . Հարագատ հայրը անխնայ աստակներ էր տալիս իր մանուկներին և վրանից դուրս վռնդելով՝ ասում. «Շան որդիք, ի՞նչ էք լքցուել վրանը, վերցրէք զայտներդ, գնացէք հարևաններէ երեսայոց հետ կուռէք, որ մեծանաք աշխր (քաջ, աղատ, անսանի) դառնաք . . . Կոյր ազգիկ հօ չէ՞ք, որ յոյս կտրեմ, գիտենամ մինչև վերջը

ես պէտք է աշխատեմ, ձեզ պահեմ . . . Գնացէք, անվեհերութիւն սովորէք, որ վաղը կարողանաք մի կտոր հաց ձորել . . . Իսկ յաղթողը վազելով իր հօր մօտ, պարծանքով հաղորդում էր նրան իր բազագործութիւնը, թէ՛ սրա գլուխը ջարդեցի, նրա քիթը ջարդեցի և այլն: Հայրը շոյում էր նրա գլուխը և ասում. «Սարիս, դաւակ, միշտ այդպէս քաջ եղիր, անվախ եղիր. ես որ դնամ քաղաք, քեզ համար մի փոքր դաշոյն կամ ստորձանակ կառնեմ» . . . Նրեխան կրկին դուրս էր վազում, հօր խոստումը հաղորդելու իր ընկերակիցներին: Ահա այդ մանուկներն էին, որ իրանց հարաչ-հրօցով փոքր ի շատէ կենդանութիւն էին տալիս դատարիւած վրաններին:

Նրեք ճիւղերը անարգելք հասան Հասան-աղայի վրանին: Վրէլէն ներս նայեց վրանից, տեսաւ ոչ ոք չըկայ, այս ու այն կողմը նայեց, տեսաւ մի երեխայ մօտիկ վրանից դուրս եկաւ, մի ձեռքին փայտ և միւս ձեռքին մի բուռում (մեծ թիքայ) հաց ու պանիր կծոտելով: Նրեխան մի խոր հայեացք ձգեց ձեռքերը վրայ և կամենում էր հեռանալ դէպի խաղացող մանուկները, բայց Վրէլէն կանգնացրեց նրան ձայն տալով.

- Տղայ, չըզխտես աղան ո՞ր է՞:
- Ո՞վ, աղան . . .
- Հն, աղան, Հասան աղան:
- Հասան աղան . . . հն . . . աղան տանը չէ:
- Բխտեմ տանը չէ, ո՞րտեղ է:

Այդ միջոցին փոքր ինչ այդտեղից հեռու հաւաքւած մանուկներէ խմբից լսելի եղաւ մի խառնաձայն աղաղակ, նրանք իրար խառնեցին: Վրէլէն հետ խօսող մանուկը տեսնելով ընկերներէ իրարանցումը, մոռացաւ պատասխանել նրան և ձեռքի

բուռու մը դէն ձգելով, սատարասուեց վազել դէպի այն կողմը:

— Աստ, աղան սրտեղ է, յետոյ դնա, գոչեց վրդովւած Գիւլէն:

— Ի՞նչ ես զայրանում... մեր Սըսուին այնտեղ ծեծեն, ես կանգնեմ քեզ հետ խօսքիմ. ես ի՞նչ դիտեմ աղան սրտեղ է, դնա ու գտիր . . .

— Աստ, քեզ շարար կըտամ, սին էլ կըտամ, ասաց քաղցրութեամբ Գիւլէն:

— Հրէն այնտեղ, ոչխարներ է ծախում, ասաց լամուկը ցուցամատը սրտընելով դէպի մօտիկ բլրակի վրայ, ոչխարները հօտի մօտ հավաքած մարդկանց խումբը, և փայտը դնելով թւեն, վազեց դէպի կուռղ մանուկները: Նա չըսպասեց մինչև անգամ, որ Գիւլէնց ստանայ իր արած ծառայութեան վարձը. որքան էլ համահաւասար սիրելի են քրդի համար շաքարն ու սփռը, այնուամենայնիւ չըկարողացան փոքրիկ լամուկին լետ պահել կուլից. նա թողեց այն և վազեց օգնելու իր եղբայրներին, նրա մէջ այնքան վառ էր պատել զգացմունքը, որ նա այդպիսի մի մեծ զոհաբերութիւն արեց, — զրկեց շաքարից ու սփռից:

— Ի՛նչ քչեցէք, — վատ տեղ ենք, մի գուցէ հասկացող լինի: Հինգ ըտէկց յետոյ արդէն երեք ձիւտորները շարել էին փոքր ինչ հեռու այն խմբից, որն մէջ գտնուում էր աղան: Նա տեսնելով ձիւտորներին, անխօս մնաց քարացած. իսկ ոչխար զնող Հայ վաճառականները նայում էին թէ ինչ կանեն եկողները:

— Հասն-աղան, Հասան-աղան, — գոչեց Գիւլէն, — դու չըբառահանացար նրանով, որ խլեցիր մեր ձեռքից այս ծաղիկապատ լեռները, չըբառահանացար այն անթիւ նօրդներով, որ խլեցիր,

զօղացար մեր էլիսներեց, և ուզում էիր անպատճառ հօրս, եղբայրներս և սիրելոյս արիւնն էլ խմել . . . Արքան անգուծ էր, որ չախտեցիր Մամադ-բէգիս սէս մի աշխարհ: Ես Մամադ-բէգի նշանածն եմ, դեռ ծաղիկաթիթ հասակիս մէջ դու լմ գլուխս պատեցիր սև քօղով, և ահա ես եկել եմ, որ սիրելոյս վրէժը քեզնից . . .

Հասան-աղան կատաղած դուրս քաշեց մէջքին փաթաթած քիթմանի շալի մէջ խրած ատրճանակը և այն էր ուզում էր ուղղել Գիւլէնին, բայց այս երեքի հրացանները մի աճայն որոտացին և Հասան-աղան գլորեց գետին . . . Արտացին կրկին երեք ատրճանակներ և ցած գլորեցան երկու ուրել երկսասարը քիւրդեր, որ կանգնած էին Հասան-աղայի մօտ: Վաճառականները և մի քիւրդ մնացին ողջ: Վաճառականները Գիւլէն խօսելու ժամանակ արդէն հեռացել էին աղայից և մտնելով ոչխարները մէջը, բարձրացնում էին նրանց դմակները, որ իմանան չաղութիւնը, և տեսնելով աղայի սպանումը, հէնց անհնուտեղը փուսեցին ոչխարները մէջը — թագ կացան, որ պատահմամբ գնդակը իրանց չըղխչի. իսկ ողջ մնացող քիւրդը հովիւն էր, որ նոյնպէս աղայից հեռու էր կանգնած և տեսնելով նրա սպանումը, ուղղակի վազեց դէպի վրանները: Գիւլէն մի տարրձանակ էլ արձակեց նրա յետևից, բայց գնտակը չըղխաւ:

— Գիւլէ, հիմա ի՞նչ անենք, — ասաց Գօզալը հրացանի մէջ վառօղ լցնելով, — փախչենք, թէ . . .

— Փախչենք՝ յետևներեց կըխբեն, աւելի լաւ է՝ ցած եկէք ձիւտեցից և թագ կենանք մի-մի քարի յետև ու սխենք գնդակ արձակել դէպի մեր կողմ եկողները, մինչև մի քիչ աւելի մթնի . . .

լաւեց նրանց „դափէ-հաւարու“ ձայնը, որ փախչող հովիւն սխեց թմբկահարել: Ամենքն էլ թողեցին իրանց գործերը և սխաճ դիմել վրանները, որ գէնք վերցնեն: Շատերն արդէն բէրատեղից տեսնելով ձիւտորներին և լսելով նրանց հրացանները որոտմունքը, հասկացել էին նրանց թշնամի լինելը և շտապելով վրանները, գինւորւել-պատրաստուել էին:— Լուրջը յայտնեց աղաչի սպանումը և սուգ ու շլւան, գոռում ու գոչումով դղըրդաց օդը: Հասան-աղաչի կենը լսելով որ թշնամիները աղջկիներ են—Սրբկցիք, չուզեց յետ մնալ նրանցից . . . Նա մի հրացան առնելով ձեռքը, ոտաբորիկ դիմեց դէպի սարի կատարը, որ աչնտեղից շուռ դաչ միւս կողմը և թշնամիներն յետեւից վրայ հասնի: Տղամարդկանց մի խումբը արդէն ստորաստ էր, բայց չըգլտէին որ կողմից գնան թշնամիներն վրայ, որովհետև հանդէպից նրանց դնդակները անընդհատ տեղում էին: Վերջապէս զձուեցին դէմառդէմ դնալ, հօ նրանք չէին կարող բորբին էլ սպանել մինչև իրանց հասնելը: Մարդիկ էին, որոնց ցած էին դրոյում դարանամուտները, բայց սրանք յառաջ էին գնում:

Յանկարծ յետևի կողմից մի գնտակ գիտաւ Չայնէին և նա „վնչ, դաչ (մայրիկ)“ գոչելով իրուեց գետին և ցաւի կակծից սխեց ձեռքերով գետինը չանդուել . . . Գոգալը շիթլեց, դողդողաց և ուզում էր քրոջ գլխին վրայ վաղել. այդ միջոցին յետևից մի գնդակ էլ դէպի նրան եկաւ. նա յետ շտապեց, տեսաւ Հասան-աղի կնիկան: Հրացանը ուղղեց նրա վրայ, բայց վրիպեցաւ. քաշեց ատրճանակը՝ դարձեալ չըկարողացաւ խբել, ձայն տաւ Գիւլէին, և ցոյց տաւ եկւորին: Գիւլէն հրացանը նրա վրայ արձակելն ու ձեռքից վէր ձգելը մին արտա:

— Գոգալ, մենք էլ ընկանք . . . Վաւորս վերջացաւ . . .

Մութն արդէն պատել էր. թշնամիներն էլ արդէն հասուհաս էին: Նրանք սխեցին ոտով վազել դէպի ցած, դէպի ձորը: Յանկարծ այն կողմից լաւեց հրացանները որոտումներ:

—Մի վախը, Գոգալ, ազատեցինք, մեր տղէքն են:

Արկին մի ահագին դղրոց և՛ հարեւրաւոր հրացաններ մի անգամից որոտացին. շրջակայքը մի վայրկեան լուսաւորւեց:

Գիւլէի վրայ եկող Չալալցի խումբը կանգ առաւ: Նրանք հասկացան, որ Սրբկցի ամբողջ ցեղն է եկողը և յետ դարձան դէպի իրանց վրանները, որ աւելի մեծ ուժով պատրաստւին նրանց դիմադրելու:

—Մերոնք են, Գիւլէ . . . Գնանք գէպի նրանց, թէ լուստենք նրանք գան:

—Չէ, Գոգալ, եթէ գնանք՝ գուցէ մթնով մեզ թշնամի կարծեն և հրացան արձակեն. նստենք մի քարի մօտ, թող մօտենան:

Խուժըրը արդէն մօտեցել էր. բայց Գիւլէն և Գօզալը, վախենում էին դուրս գալ նրանց առաջ, կասկածելով՝ մի գուցէ թշնամի կարծեն և յանկարծ հրացան արձակեն: Խուժըր տնցաւ նրանցից առաջ:

— Աւզաւ . . . Աւզաւ . . . Մենք ենք . . . Գիւլէն . . .

Գօզալը:

Աստախտութիւնը կամուք առաւ: Գիւլէն և Գօզալը դուրս եկան իրանց դարանից և վաղեցին դէպի նրանց:

— Աղջի Գիւլէ, — ասաց Աւզալը ցած իջնելով ձիուց և մօտենալով քրոջը, — աղջի, ինչո՞ւ եկաք, ի՞նչ էք շինում այս ժամանակ այտերդ: Նթէ մի փորձանք պատահէք ձեզ՝ մեր ցեղի անուեր . . .

— Մնա Աւզալ, մենք եկանք և ինչ-որ մեր սլարտքն էք կատարեցնիք. . . Հասան-աղային մի քանի ծառաներով ուղարկեցինք իր ողորմածիկ պապերի մօտ, խեղձի կլնն էք, թէ քոյրը՝ չուղեց բաժանելի նրանից. նրան էլ ուղարկեցի . . .

— Ի՞նչ ես ստում, Գիւլէ, պարզ ասա՛ւ: —

— Հասան-աղային սպանեցի, վրէժս առայ . . .

Աւզալն այլևս չբիարողացաւ համբերել, փաթաթեց քրոջը և համբուրեց նրա ճակատը:

— Հալալ լինի քո կերամ կաթը, աղջիկ . . . Դովաբանեցին ամենքը ուրախական աղաղակներով:

— Յիւս իջէք, աղէքք, հրամայեց Աւզալը. այլևս հարկաւոր չէ անժամանակ թշնամու վրայ գնալ, քանի-որ մերօնք աղատուած են և այնպիսի մի անուն ժառանգած մեր ցեղին, որ եթէ անժամանակ և հակառակ աշիրաթի օրէնքներին շարժելիք, աւելի արատ կըբերենք այդ պատուին: Ինչ պատու որ

Ի.

Միակից ստապտումբը իբրև մի կատարել մըրիկ, անդադար շանթեր արձակելով յառաջ էր սլանում դէպի Ջալալցոյ կողմը: Ձկանց ոտքերի տրոփիւնը, գէնքերի շառաչիւնը, հրացանների որոտումը դղրդեցնում էր օդը: Նրանք մտադիր էին խնդն և էթ յարձակել Ջալալցոյ վրայ և անխնայ կոտորել նրանց, թէ մեծին և թէ փոքրին: Նրանք աւելի զբաղուած էին ոչ թէ Մամադ-բէգի և միւս սպանուած տղերանց համար, այլ կարծում էին, Գիւլէին, Գօզալին և Ջալնէին ևս Ջալալցիք կամ բռնել են, կամ սպանել, որովհետև իրանք ոչ մի տեղ չբախտան նրանց, չընայած ամեն ճիգ առաւօտից գործ էին դրբել, որ հասնին նրանց և վերադարձնեն: Այդ մեծ անպատուութիւն էր նրանց համար . . . Նթէ նրանք հարիւր տղամարդ կորցնէին, այնքան նշանակութիւն չունէր իրանց համար, որքան երեք ազապ աղջիկներ, մանաւանդ եթէ վերջիններս ըստ պանուած չըլինէին, այլ գերի ընկած . . . Այս էր պատճառք, որ հակառակ աշիրաթների օրէնքներին, նրանք վճուել էին անմիջապէս — գիշերով յարձակել Ջալալցոյ վրանների վրայ, առանց նախապէս նրանց իմացնելու:

այս երեք աղջիկը բերին, գուցէ մենք այս ամբողջ բանակով
չըկարողանալինք բերել. . . Գիւլէ, արև մի բանով էլ մենք ձեզ
ուրախացնենք, գիտես ի՞նչ . . .

— Ի՞նչ, Աւդալ . . .

— Որ ասեմ, գուցէ չըհաւատաս. Մամադ-բէգը ողջ է:

— Հանա՛ք ես անում, Աւդալ, թէ՞ ծիծաղում ես:

— Ասան, Աւդալ, օտքիդ տակի հողը լինի՞մ, — սրտատրոփ
մէջ մտաւ Գոզալը. — ասա տեսնենք ի՞նչ ես ասում: Նա չըկա-
րողացաւ այլևս համբերել, արտասուքը խեղդեց նրան, և ա-
ռանց համբերելու Աւդալի սրտասխանին, սխեց գովելով ող-
բալ. — Իմ թագայ թագաւոր Մամադ-բէգ, իմ աղա-վէջիս օխ-
պէր ջան, իմ գարնան ծաղիկ, տասն մարդու զինադրո՞ղ, մեր
ցեղի աջու թև . . . Գիւլէն էլ սխեց ձայնակցել նրան . . .

— Աստուծոյ անունը վրայ՝ Մամադ-բէգը կենդանի է, և
Ուշ-քիլիսումը, ու էս Յարօի տանն է: Գալիս՝ ես ուզեցի այնտե-
ղից ձեր մասին տեղեկութիւն իմանալ, բայց Մամադ-բէգի մա-
սին իմացայ. գնացի տեսայ սրաւիած էր, վէրք ունէր . . .

— Ուղիղն ասան, Աւդալ ջան, — թախանձեցին Գիւլէն ու
Գոզալը և վաթաթւեցին իրա օտներին — կենդանի է Մամադ-
բէգը . . .

— Ի՞նչպէս հաւատացնեմ ձեզ, երկինք, գէտինք, ծով ու
ցամաք Մամադ-բէգը կենդանի է: Վեր կացէք: Մենք այլ ևս
այս գիշեր չենք չարձակել թշնամիները վրայ, արդէն հաւա-
տար դուքս եկանք . . . կսպանենք այստեղ և վաղը մեր գի-
ակները կըպահանջենք միայն, եթէ նրանք չըկուեցին՝ մենք
չենք կուլի. իսկ դուք մի քանի տղայ վերցրէք և գնացէք
Ուշ-քիլիսա, Մամադ-բէգին տեսէք: Աղջի, Չայնէն ո՞ւր է, չընի. . .

— Չայնէին էլ սպանեցին: Նրան էլ Հասան-աղայի կնիկը
խրեց, բայց ինքն էլ կերաւ . . . Գնանք դիակը բերենք, մօտ է:

Մի տեսակ ուրախութեան արտասուք խեղդում էր Գիւլէ-
ին և Գոզալին, և նրանք մոռացել էին ամեն ինչ և միայն
Մամադ-բէգի վրայ էին մտածում: Չայնէի դիակը բերին,
բայց նրանք մոռացել էին նրան. Մամադ-բէգի մասին լաւ
ըր այն աստիճան ուրախալի էր, որ մոռացնել էր տալիս առաջ-
ները դիակը: Նրանք թէպէտ Չայնէի վրայ լալիս էին, բայց
այդ արտասուքը Մամադ-բէգին էր . . .

— Ճաճօյ, Բարիսէ և Աւդօ, ասաց Աւդալը, — դուք աղջիկնե-
րին տարէք Ուշ-քիլիսայ, թող Մամադ-բէգին տեսնեն և եթէ
նրա վէրքը շատ վտանգաւոր չի լինի, վաղը գրէք ձեւ վրայ և
տարէք տուն, իսկ մենք կըմնանք այստեղ, տեսնենք վաղն
ի՞նչ է լինելու:

— Աւդալ, — ասաց Գիւլէն, — աշխատէք վաղն էլ կուլի չա-
նել. բաւական է ինչ-որ թէ մեր կողմից և թէ նրանց կող-
մից ընկան:

— Եթէ նրանք կուլու չըլինին, մենք չենք կուլի. բայց
եթէ նրանք ուզենան կուլել, մենք հօ չե՛նք կարող մեզ այն-
քան ստորացնել, որ հրաժարենք կուլից . . .

Գիւլէն, Գոզալը և միւս չորս տղէրքը հեծան իրանց ձիան-
քը, յաջողութիւն մաղթեցին մնացողներին և դիմեցին գէ-
պի Ուշ-քիլիսէն, իսկ մնացողները պահապաններ կարգեցին, որ
յանկարծ թշնամին վրայ չըսայ. և ձիանքը թողնելով արածեն,
իրանք հանգիստ ձգեցին կանաչ խոտերի վրայ:

Բ.

Եւստասի բարձր ճրագակալի վրայ վառվում էր հողէ ձէթի ճրագը և իր սպաս լոյսով հաղիւ լուսաւորում էր ընդարձակ ատունը։ Տան վերի կողմը ձգւած էր մի մաքուր անկողին, որի մէջ պառկած էր մէկը և իր ծանր տնքոցով խանգարում էր տիրող լուսթիւնը։ Նրա գլխի կողմը նստած էր մի ծերունի և թիկն սուած բարձին, լուս՝ շրթունքների շարժւածքով ինչ որ աղօթքներ էր մըմնջում և ցած քարում երկայն սև սաթէ համրիչի հատիկները։ Վերջինս Ռէս-Յարօն էր, որ Հայաստանի յատուկ հիւրասերութեամբ իր տանը ընդունելով հիւանդին, դորձ էր դնում իր լսած ու տոլորած բժշկական բոլոր հմտութիւնները նրան առողջացնելու համար։ Եւ չընտանգարելով իր երիտասարդ սղիւրանց և հարսների հանգստութիւնը, ամբողջ գիշերները ինքն էր հոգ տանում նրա վրայ։ Մերունին բարձրացրեց հիւանդի երեսից վերմակը, նայեց նրա գունատ դէմքին, և տեսնելով հանգիստ է, վայր ձգեց ձեռքի համրիչը և թիկն աստով բարձին, աչքերը խիեց ու քնեց։

Նրկար չէր անցել, նա լսեց շների հաչոցը և իրանց գաւթի գոան չընկչընկոցը։ դուրս եկաւ, որ անտնի ուղքեր են։ Բայց այդ միջոցին արդէն նրա որդեքը կտրեց ցած էին եկել

և գուռը բացել։ Նկուրների առաջին հարցը եղաւ՝ Մամադ-բէգին տպտեղ է։

— Այո՛, այտեղ է, — լաւաչ գնաց ծերունին, — ո՞վ էք. եթէ հիւր էք, համեցէք ներս։

— Մամադ-բէգի քոյրերն ենք . . .

— Համեցէք, համեցէք, — ներս հրաւիրեց ծերունին, — փառք Աստուծոյ, այսօր տկարութիւնը մի փոքր լաւ է։ Համեցէք . . . Բայց եթէ քնած կըլինի՝ խնդրեմ ձայն չտար։

Գիւլէն և Գոզալը արուզ-արագ ներս մտան և չոքելով հիւանդի անկողնի մօտ, բաց արին նրա երեսը։ Գիւլէն այլ ևս չըկարողանալով համբերել, հեկեկալով փաթաթուցեց նրա վզով և գոռաց.

— Մամադ զան, այդ ինչ հալի ես, աչքերս կուրանա՞ր՝ քեզ այդպէս չտեսնէին։

Գոզալն էլ միւս կողմից սխեց գոռգոռալ։ Հիւանդը աչքերը բաց արեց և ապուշ կտրած ասաց հանդարտ.

— Այս ո՞վքեր են . . .

— Նս եմ, ես, Մամադ, քո խեղճ Գիւլէն։

Գիւլէն անունը լսելով, հիւանդը մի խոր հայեացք ձգեց նրա երեսին և ուզեց դուրսը վեր բարձրացնել, բայց չըկարողացաւ։ Գիւլէն թևը անցկացրեց նրա պարանոցի տակով և դուրսը խոնարհեցնելով նրա երեսին՝ ասաց.

— Նս եմ, Մամադ զան, նս։ Ահա միւս կողքիդ էլ Գոզալն է։

— Ո՞րտեղից եկաք, ի՞նչպէս ինձ գտար։

— Գնացինք քո թշնամիներից վրէժդ առանք . . .

— Ո՞ւմնից, ի՞նչպէս։

— Հաստե-աղաչից, Մամադ զան, նրան ստանցեցինք։ Մի-

Թէ Գիւլէդ այնքան սպերախա կըլնէր, որ չէր կատարել քեզ տաճ խօստու՛մը: Ահա այն խոստման օրւան, նշանը այս յօգեմ'ը . . .

— Ի՞նչ, Գիւլէ ջան, քո սպանեցիք Հասան-աղային. այն ան-
քուժ գազանին . . . սպանեցիք . . .

— Այո՛, ես և Գօզալը . . . Խօսիք նրա հետ էլ, Վամադ,
աեւ ընչպէս է լաց վնում:

— Գօզալ ջան, դուք սպանեցիք այն, այն . . .

— Հա, Վամադ ջան, մատաղդ վնիմ, սպանեցինք քո
Թշնամուն, հանգիստ եղիւր . . .

— Արժանաւոր նշանած և արժանաւոր քոյր Վամադ-բէ-
գի . . . Տէէք այդ ձեռքերը վերջին անգամ մի համբուրեմ,
տէէք համբուրեմ այն ձեռքերը որ Թշնամու գետին տապա-
լեցին: Այս ասելով նա բռնեց Գիւլէի և Գօզալի ձեռքերը, և
մօտեցրեց իր դողողուն շրթունքներին . . . Հիմա հանգիստ
եմ, Թող մեռնեմ . . . Հասան-աղէն էլ չի կարող պարծենալ,
Թէ՛ Սիպկիք մեր ստրուկներն են, սպանում ենք, կողոպտում
ենք՝ առաջներս խօսող չի լինում . . . Դէ, Թող հիմա Չալալ-
ցիք գիտենան, որ Սիպկրցոց կանայքն իրանցից գերազանց են՝
Քող աշխրթները տեսնեն, որ Վամադ-բէգի նշանածն էլ իրան
պէս աշխր է, ոչ Թէ հասարակ աղջիկ . . . Խօս ընկաչ, բայց
իմ նշանածս վերականգնեց իմ պատիւս, նա չեա խլեց տմարդ
Թշնամուց տմարդաբար ինձանից խոյած պատիւս: Ընկաչ, այն,
տմարդաբար վէր ձգեցին. ասում են՝ երբ Քօրօղլեն տեսաւ
հրացանը, սուրը ցած դրեց և ասաց «սրանից յետոյ քաջութիւ-
նը, ոչժը ոչինչ նշանակութիւն չուէի» . . . Քող անխրաւ Թշնամին
առանց հրացանի, սրով և վահանով գար ինձ վրայ, կըտես-

նէք Թէ քանի կար կըլնէր—մեծ կարն ականջը կըմնար. . .

Հիւրերի գարուն պէս, տան տիրոջ հարաները և աղջկէքը
վեր էին կացել և նրանց հիւրասիրելու համար սրատրաստու-
թիւն էին տեսնում: Աերսիւրները և սեղանը արէն սրատ-
րաստել էին և տան սիւների լետեք կանգնած, լուս էին հա-
մարձակ քրդուհիւներ խօսակցութիւնը: Երկար շղարչը երեսնե-
րին, դեռ կարծես նրանք ամաչում էին դուքս գալ իրանց նը-
ման կանանց առաջ: Նրանք իմանալով որ այդ քրդուհիւքն
են Հասան տղային սպանել, իսկուսում էին իրար ականջի և
կանանց յատուկ նախանձով՝ համեմատութիւն էին անում
նրանց և իրենց մէջը:—Ննչով են գանազանուս նրանք իրանցից,
չէ որ նրանք էլ իրանց պէս կանայք են: Ինչո՞ւ նրանք իրա-
ւունք ունեն մինչև անգամ Թշնամի տղամարդկանց հետ կըռ-
ւի ասպարէզ դուքս գալ, իսկ իրանց արգելում է մինչև ան-
գամ բարեկամ տղամարդկանց մօտ երեսը բաց դուքս գալ և
նրանց հետ խօսել . . . Նրանք մտածում էին և սրտները
լցում էր մի տեսակ ատելութեամբ դէպի իրանց ամուսիննե-
րը—բռնակալները, որոնք ուղում են իրանց իրիւ սարուկ միշտ
ճնշած պահել, քօղարկելով այդ բանը «համեստութիւն»
բառով . . .

— Բաւական է, Թոյլ տէք հիւանդը հանգստանայ,—մօ-
տեցաւ ձերունի տան տէրը Գիւլէին,—իսկ դուք յօգնած կըլն-
նիք, համեցէք հաց կերէք և քնեցէք:

— Քաղցած չենք, հայրիկ, Թողէք մեզ այստեղ մնալ:

— Հիւանդը մեղք է, մի չարչարէք:

Խեղճ ձերունին հացիւ կարողացաւ նրանց հեռացնել հի-

ւանդից: Նրանք բազմեցան ճոխ սեղանի շուրջը և փոքր ինչ
քնթրիք անելով, վեր կացան հէնց շորերով մտան իրանց հա-
համար սպտրատած մաքուր անկողիններէ մէջ:

Թ.

Հիւանդը շատ վատ դրութեան մէջ էր. նա այլ ևս չէր
խօսակցում Գիւլէի և Գոզալի հետ, որոնք նստած նրա այս ու
այն կողմը արտասուք էին թափում: Մերուքն տան տէրն ևս
տխուր էր. նա նստած հիւանդի ոտները մօտ, անդադար մեր-
սում էր: Նա ափսոսում էր Մամադ-բէգը պէս մի դեռահաս
աշխի, և վախենում էր՝ մի գուցէ մի փորձանք սպտահի նրան
և իր բոլոր աշխատանքը, որ գործ էր դրել նրան առողջացնե-
լու, իզուր անցնէր: Նա ափսոսում էր և Գիւլէին, այն զիւցադ-
նուհուն, որ իր սիրելի նշանածի վրէժն առնելու համար, այն-
պիսի յանգուզն մի փորձ էր արել և անվտանգ վերադարձել:

— Գիւլէ, Գիւլէ, — ձայն տուա հիւանդը:

— Ի՞նչ է, Մամադ ջան, խօսի՛ր, ինչու ես մեզ այսպէս
հայրումաշ անում, — ասացին Գիւլէն ու Գոզալը արտասուածոր
աչքերով:

— Գոզալ, իմ ճրագս հանգուա . . . ես դնացի . . . Հայ-
րիկի ձեռքը համբուրի՛ր և ասա ինձ վրայ շատ չքմիկտայ . . .
ես մեռայ այն մահով, ինչ որ վրձակւած է աշխրհներին. թող
դրանով գոնէ միտթարել . . . ասա փոքրիկ եղբօրս՝ Սըմօին բա-

պահի. նա ժամանակով կարող է իմ տեղս բռնել: Իմ ձիս,
իմ գէնքերս ոչ ոքի չըտաք, կըսահէք՝ մինչև որ Սըմօն հասա-
կը կառնի: Ասի՛ր հայրիկին, որ իր երախտիքը հաշալ անի . . .
Գիւլէ, քեզ ի՞նչ ասեմ, դու հաւատարիմ եղա՛ր: դու կատարե-
ցիր քո խոստումդ. դու արել արն, ինչ-որ գուցէ ոչ մի աղջկի
չանէր . . . Մնաս բարով. թող Ասուած քո հաւատարմութեանդ
փոխարէն հատուցանէ քեզ, թող քեզ այնպիսի մի բախտի ար-
ժանացնէ, որ դու ինձ բոլորովին մոռանաս . . . Գու կատա-
րելու: Արեմն լետ ստացիր ինձանկի քո աւած համայնիդ և
տուր նրան, որին վրձակւած կըլինի իմ տեղս բռնել: Բնաբեր
քեզ համար մի այնպիսի ամուսին, որ գոնէ ինձանկից պակաս
չըլինի քաջութեամբ: Այ մի հարստութեան աչք մի դնիր, մեր
պատերի օրէնքները համեմատ՝ անվէհերութիւնը գերադասիր
դ՝ ամեն հարստութիւնից: Սիրիւ նոր ամուսնուդ այնպէս, ինչպէս
սիրելիք ինձ և հաւատարիմ եղիր նրան: Իմ մտքմինս թաղե-
ցէք այն բլրի վրայ, որտեղ ես սովորաբար արածացնում էի
ոչխարներս: Զըմուսնուք ամեն գարուն, սար բարձրանալու
ժամանակ, ճաղիկներ ցանէք վրաս և ողորմի տաք: Մնացէք
բարով . . .

Գոռուս-գոչուսն ընկաւ տան մէջ . . . Մամադ-բէգը վեր-
ջին խօսքը հազիւ կարողացաւ վերջացնել. մահւան վերջին
րօտէն վրայ հասաւ . . . Նա մի անգամ ևս իր սեւ, խամբած
աչքերը ձգեց իր շրջասպտաղների երեսին, վերջին անգամ
նայեց Գիւլէի երեսին և արտասուքի յորպուտա կաթիլ-
ները դուրս թափուեցան նրա աչքերից: Նա այլևս չէր կարողա-

նում խօսել. կարծես այն, ինչ որ պիտի ասէր լեզուով, արտասուքն կաթիլներով էր ուզում հասկացնել . . .

Գիւլէն և Գօզալը փաթաթակեցին հիւանդին և չէին ուզում բաժանել նրանցից: Նրանց կօծն ու աղաղակը ամեն լսողն արտասուքն էր բերում, գութը շարժում . . .

— Մամադ ջան, ինչ համբաւ տանեմ ձեր տուն, գուռն էր Գիւլէն, — ինչ լուր տանեմ ձերունի հօրդ. ասեմ դեռ կէնդանի էր, ես գնացի, յետոյ մեռաւ . . . Ինչ աչքերդ, տես, դեռ հարսանիքի ոսկէ շարան չըլլած գլխիս, պիտի սև քոզ կապեմ, պիտի սև պատանի մէջ փաթաթակեմ . . . Զարթիւր, Մամադ ջան, զարթիւր, հօտ ու սրինգդ անտէր են մնացել, սար ու հովիտդ սև են հազել. ծաղիկները թռածել են, աղբիւրները չորացել են, քո կարօտովն են այրում, քո գալուն են սպասում . . . Վեր կաց, սրինգը ձեռքդ առ, քչիւր հօտդ հովիտը տար. սուլիւր սրինգդ քաղցրաձայն, լեռներ ձորեր խոյան ցնծան, ծաղիկները բացին կրկին, թռչուններն երգեն մեղեդին, զարթիւր Մամադ, աչքերդ բաց, տես ողջ աշխարհ սուգ է մտած . . .

Նոյն օրը երեկոյեան պահուն, Արծառի գիւղն մօտով անցնում էր ձիւտներն մի խումբ: Առջևից գնում էին չորս երեսասարդ տղամարդիկ, իսկ նրանց ետևից երկու աղջիկներ: Տղամարդկանցից մէկը նախշուն գորգի մէջ փաթաթած մի դիակ ունէր դրած իր առջևը ձիու վրայ: Տղամարդիկը բոլորն էլ լուռ էին, իսկ երկու աղջիկները հերթով երգում էին. նրանց գեղեցիկ ձայնին արձագանգ էին տալիս անլեզու սարերը. և

կարծես ձայնակցելիս լինէին: Դրանք Մամադ-բէգի դիակն էին տանում:

Ինչպէս ամեն մի քաջ երիտասարդի համար քրդուհիները չօրինում են նոր երգեր, այնպէս էլ Գիւլէն և Գօզալը արգէն Մամադ-բէգի քաջադորձութիւնները մի նոր չօրինածով երգում էին . . . Մամադ-բէգի սէրը նրանց սիրտը կակնով լցրել էր, նոր լեզու էր սուել, որ առանց երկար մտածելու, իրար յետեւից անսպառ երգում էին բարձր ձայնով:

Գիւլէն էր սկսել. —

Վայ լէ ու՛՛ . . .

Հասալ'դ Մամադ-բագէ մի չալ ա,
Դաստակ' շուր ա, եկ' մարտալ ա,
Դա մէրէ'դ միրան Մամադ-բագ ա,
Սուարէ թօռուն Մամադ-բագ ա . . .

Ախ վայ, ախ վայ . . .

Մամադ բէգը չալ ձին հեծած,
Սուր ու վահան ձեռքն առած,
Իշխանագի է նման,
Քաջ դիցագի է նման:

Գօզալը շարունակեց.

Թող Սիակըցի օրիորդներ
Հանեն իրանց սիրուն զարդեր,
Նորահարսներ վերցնեն մահրման,
Մամադ-բէգիս վրայ ողբան . . .

Գողայի ասածը կարծես դիւր չեկաւ Գիւլէին. նա չըթո-
ղեց նրան այլ ևս շարունակել, կտկին ինքը շարունակեց. —

Ով որ ստորով՝ ծնի, մեռնի,
Ողբարու նա է արժանի.
Քաջ դիւցազնը միշտ անմահ է,
Թէ մեռնի էլ նա կենդան է:

Թող Սիպկլացի օրիորդներ
Հագնեն իրանց սիրուն զարդեր,
Ճաղկանց փունջեր ձեռքրներին՝
Գան ողջունել Մամադ-բէգին:

Ճնաւ ազատ, ազատ մեռաւ,
Իրան ցեղին սլափու բերաւ,
Այո՛, լաւ է ազատ մեռնել,
Քան օտարին՝ ստրուկ ապրել . . .

Վայ լէ դէ . . .

Վայ լէ դէ . . .



Թվիկիտի հայ գրախաճածո անույններով վաճառվում են

Թ Ա Ս Ի Բ

տաճկահայ պատանիների կեանքից

Գինն 1, 20 կոպ.

Կ ի ի ի ի

մի արկած քիւրդերի կեանքից

Գինն 1, 15 կոպ.

Գրուկ Քրեդակցիա „АГБИОНЪ“

2013

12648

